

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԿԸ ՄԵՂԱԴՐԷ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԱՍՊԱՆԸ ՀՈՎԱՆԱԲՈՐԵԼՈՒ ՄԷՋ

Պոլսոյ մէջ հրատարակուող հայկական «Ակօս» թերթի սպաննուած խմբագրապետ Հրանդ Տինքի ընտանիքը պահանջած է թրքական դատախազութենէն, իրաւական գործողութիւններ ձեռնարկել ռատիկանութեան դէմ՝ մարդասպանին հովանաւորելու մեղադրանքով:

Ինչպէս կը տեղեկացնէ «Ֆրանսփրես» գործակալութիւնը, հարցը կը վերաբերի ապահովութեան ուժերու այն ներկայացուցիչներուն, որոնք «լիշատակի համար» լուսանկարուած էին Տինքի սպանութեան համար ձերբակալուած 17-ամեայ ազգայնական Օզիւն Սամասթի հետ:

Լրատուամիջոցներու կողմէ հրապարակուած լուսանկարներու մէջ պատկերուած էին ռատիկանութեան պաշտօնեաներ՝ Թուրքիոյ դրօշը ձեռքին բռնած Սամասթի հետ, ինչ որ առիթ տուաւ կասկածներու, որ որոշ պետական պաշ-

Շարք էջ 4

ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՅՆԵՐԸ ԴԺԳՈՅՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԱՆԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահները՝ ռուսաստանցի Եուրի Մերզլեակով, ֆրանսացի Պերնարտ Ֆասիէ եւ ամերիկացի Մեթիւ Պրայզա անցեալ շաբթուայ ընթացքին Վիէնայի մէջ հանդէս եկան յայտարարութեամբ մը՝ Լեոնային Ղարաբաղի հակամարտութեան վերաբերեալ:

Համանախագահները կարեւոր նկատած են տալ իրենց գնահատականը՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու վերջերս Սանկտ Պետերբուրգի մէջ կայացած հանդիպման լոյսի տակ:

«Դժբախտաբար, նախագահները չկարողացան յաղթահարել առկայ դժուարութիւնները: Այս, նաեւ միւս կողմէ Հայաստանի եւ Ատրպէյճանի մէջ 2008 թուականին սպասուող նախագահական ընտրութիւններու քարոզարշաւը, ինչպէս անցեալի փորձն ցոյց կու տայ, կրնայ դժուարացնել յառաջընթացի կարելիութիւնները: Առանց նախագահներու մակարդակով գլխաւոր սկզբունքներու ընդունման՝ անհնար է սկսիլ հակամարտութեան խաղաղ կարգաւորման

բանաձեւի կազմութիւնը կամ ապահովել նախորդ երեք տարուայ բանակցութիւններու յառաջընթացը՝ ամէն ինչ նոր չսկսելու համար», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Համանախագահները կ'ընդունին որ, «Ղարաբաղի մէջ 13 տարի «ոչ պատերազմ, ոչ խաղաղութիւն» վիճակէն յետոյ «ստատուս քոյի» պահպանումը Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու համար կը թուին ըլլալ աւելի քիչ դժուար, քան փոխզիջումները, որոնք կը բերեն հակամարտութեան անխուսափելի եւ վերջնական լուծման եւ ժողովուրդներու՝ խաղաղութեան եւ բարգաւաճման դարաշրջանի»:



ԵԱՀԿ Մինսկի համանախագահները ձայնեցնելով Մեթիւ Պրայզա, Պերնարտ Ֆասիէ եւ Եուրի Մերզլեակով

մերը կը խուսափին այսօր խիզախ որոշում կայացնել, մենք՝ միջնորդներս, չենք կրնար որոշում կայացնել անոնց փոխարէն»:

Համանախագահները պատաստակամութիւն կը յայտնեն օգնել կողմերուն՝ նախապատրաստե-

Շարք էջ 2

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ՄՕՏԵՆ ԿԸ ՀԵՏԵԻԻ «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ» ՌԱՏԻՈՎԱՅԱՆԻ ՀԱՐՑԻՆ

Հայաստանի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու գործերու ժամանակաւոր հաւատարմատար՝ դեսպան Ռուտոյֆ Փերինա երկուշաբթի, Յուլիս 16-ին Երևանի մէջ հանդիպում ունեցած է ՀՀ Արտաքին Գործերու նախարար Վարդան Օսկանեանի հետ, քննարկելով երկու երկիրները յուզող շարք մը հարցեր:



Ռուտոյֆ Փերինա (ձախից) եւ Վարդան Օսկանեան հանդիպումի ընթացքին

Հանդիպումի ընթացքին Դեսպան Փերինա յայտնած է, որ ամերիկեան կողմը մօտէն կը հետեւի «Ազատութիւն» ռատիոկայանի շուրջ ծաւալուող իրադարձութիւններին: Ան յոյս յայտնած է, որ վերջերս սկսած բանակցութիւններու արդիւնքով, փոխշահաւէտ համաձայնութիւն կը կայանայ Հայաստանի Հանրային ռատիոկայանի եւ «Ազատութիւն» ռատիոկայանի միջեւ, այս վերջինի հաղորդումները պիտելու շուրջ:

Դեսպան Փերինա անցեալ շաբթուայ ընթացքին հանդիպում ունեցած էր նաեւ Վարչապետ Սերժ Սարգսեանի հետ: Այս հանդիպումի ընթացքին եւս անդրադարձ եղած էր «Ազատութիւն» ռատիոկայանի հայկական հաղորդումներու հեռարձակման նիւթին:

Վարչապետի հետ հանդիպման ընթացքին ամերիկացի դիւանագէտը ըսած է թէ, հակառակ որ հարցը կը ներկայացուի որպէս պայմանագրային խնդիր, սակայն, եթէ կան խնդիրներ, ապա անոնք պէտք է լուծուին եւ չզառնան մտահոգութիւններու առարկայ:

Քաղաքական շրջանակները ունին այն մտավախութիւնը, որ Հայաստանի միակ անկախ գնադուածային լրատուամիջոցը նկատուող «Ազատութիւն» ռատիոկայանը փակելու միտող օրինագիծերու Խորհրդարանէն ներս տապալումէն ետք, իշխանութիւնը այժմ պիտի փորձեն իրենց նպատակին հասնիլ, վերոյիշեալ բանակցութիւնները ձախողցնելու միջոցաւ:

ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐՈՒ ԱՃԻՒՆՆԵՐԸ ՅԱՆՁՆՈՒԵՑԱՆ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ



Էջմիածնի Մայր Տաճարի բացօթեայ խորանին առջեւ տեղի կ'ունենայ Մանուկեաններու հոգեհանգստեան կարգը

Յուլիս 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ամփոփուեցան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) ցկեանս նախագահ Ալեք Մանուկեանի եւ տիկնոջ՝ Մարի Մանուկեանի մարմինները: Ալեք եւ Մարի Մանուկեաններու աճիւնները Տիթրոյթէն Երեւան տեղափոխուած էին Յուլիս 13-ին:

Էջմիածնի Մայր Տաճարի բացօթեայ խորանին առջեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. հոգեհանգստեան կարգ կատարեց: Որմէ ետք Ալեք եւ Մարի Մանուկեաններու աճիւնները ամփոփուեցան իրենց բարերարութեամբ կառուցուած գանձատան առջեւ:

«Ալեք Մանուկեանը՝ իբրեւ հարազատ զաւակը իր ժողովրդի, միշտ կապուած եղաւ հայրենիքի հոգսերին ու ապրեց նրա յոյսերով», - ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Յուզարկաւորութեան մասնակցեցան Ռոբերտ Քոչարեանը, Ազգային ժողովի նախագահ Տիգրան Թորոսեանը, վարչապետ Սերժ Սարգսեանը, Լեւոնային Ղարաբաղի Նախագահ Արկաղի Ղուկասեանը եւ ուրիշներ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՓՈՂԻ ԼՈՒԱՅԱԾՆ Է ԼԱԻՐ

Հայաստանում փողեր լուացում են, թէ՛ ոչ: Այս հարցի միանշանակ պատասխան չկա:

Մի կողմից ասում են, որ Հայաստանում փողեր չեն կարող լուացուել, քանի որ Հայաստանում կաջ բանկային վերահսկողութեան գրեթե կատարելա՛համակարգ, միևս կողմից ասում են, որ Հայաստանը վեր է ածուել մեծ փողերի լուացաբատան: Եւ ուրեմն՝ փորձենք գտնել հարցի պատասխանը:

Փողերի լուացումը՝ որպէս գլոբալ, համաշխարհային խնդիր, ծագեց 2001-ի Սեպտեմբերի 11-ին Նիւ Եորքում իրականացուած ահաբեկչութիւնից յետոյ:

Յանկարծ աշխարհը հասկացաւ, որ ահաբեկչական գործողութիւնների համար էլ է շատ փող պէտք, իսկ շատ փողը ահաբեկչութեան մէջ ներդնելը կը դժուարանայ, եթէ փողի շրջանառութիւնը աշխարհում հնարաւորինս թափանցիկ լինի:

Ու այսպէս սկսուեց փողերի լուացման դէմ պայքարի համաշխարհային արշաւ: Այդ պայքարի դրօշակակիր ԱՄՆ-ին եւ արեւմտեան այլ երկրներին հաճոյանալու համար ՀՀ իշխանութիւնները 2004 թուականին ընդունեցին «Յանցաւոր ճանապարհով ստացուած եկամուտների օրինականացման եւ ահաբեկչութեան ֆինանսաւորման դէմ պայքարի մասին» ՀՀ օրէնքը: Իսկ ՀՀ Քրէական օրէնսգրքում արդէն կար 190-րդ յօդուածը՝ «Ապօրինի ճանապարհով ստացուած եկամուտներն օրինականացնելը (լեգալացնելը)»:

Մի խօսքով, եթէ Արեւմուտքը մերոնց հարցնի, թէ ինչպէս են նրանք պայքարում փողերի լուացման դէմ, ապա մերոնք կարող են այս օրէնքն ու յօդուածը մտցնել նրանց աչքը: Բայց ինչպէս սովորաբար լինում է Հայաստանում, Արեւմուտքի աչքին թող փչելու համար ընդունուած օրէնքները մերոնք սկսեցին օգտագործել բոլորովին այլ նպատակներով: Օրինակ՝ փողերի լուացման մեղադրանքով կալանաւորեցին ՀՀ նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանին: Վերջինս փող էր ստացել Ռուսաստանում բնակուող իր մտերիմից:

Հիմա, եթէ Արեւմուտքը հարցնի, թէ ինչու էք կալանաւորել նախկին արտգործնախարարին, կը պատասխանեն, թէ փող էր լուանում:

Իսկ ինչպիսի՞ն է փող լուանալու սահմանումը: Այս հարցն ուղղեցինք ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրեանին: «Ես չեմ դրա մասնագէտը, դիմի Կենտրոնական բանկը», - առանց երկար մտածելու՝ ասաց պրն Խաչատրեանը:

ՀՀ ԿԲ նախագահ Տիգրան Սարգսեանը, երեւի կռահելով, որ յաջորդ հարցը լինելու է այն, թէ արդեօ՞ք Ալեքսանդր Արզումանեանը փող է լուացել, մեզ ուղարկեց իր նախկին խորհրդական, այժմ արդէն ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Ներսէս Երիցեանի մօտ:

Ինչպէ՞ս է ձեւակերպուել «փող լուանալ» սահմանումը: «Ի՞նչ իմաստով», - հարցն աւելի ընդգրկուն հնչեցնելու համար՝ հարցին հարցով պատասխանեց պրն Երիցեանը: Դե, օրինակ, Արզումանեանի ստացած գումարը փող լուանա՞լ է, թէ՞ ոչ: «Դա իմ կոմպետենցիան չէ, այլ իրաւապահների», - կարեց

ԿԲ նախկին խորհրդականը: Իսկ իրաւապահների կարծիքը յայտնի է՝ եթէ Արզումանեանը հիմա կալանաւորուած է, ապա իրենց համոզմամբ՝ արտասահմանում բնակուող ծանօթից փող ստանալը փող լուանալ է:

Իսկ ի՞նչ է ասում օրէնքը: «Յանցաւոր ճանապարհով ստացուած եկամուտների օրինականացման եւ ահաբեկչութեան ֆինանսաւորման դէմ պայքարի մասին» ՀՀ օրէնքում սահմանումը տրուած է հետեւեալ կերպ. «Յանցաւոր ճանապարհով ստացուած եկամուտների օրինականացում (փողերի լուացում)՝ ՀՀ Քրէական օրէնսգրքի 190-րդ յօդուածով նախատեսուած արարքը»: Իսկ 190-րդ յօդուածով նախատեսուած արարքը՝ հետեւեալ կերպ. «Ակնյայտ յանցաւոր ճանապարհով ձեռք բերուած դրամական միջոցների կամ այլ գոյքի հետ ֆինանսական կամ այլ գործարքները կատարելը, տուեալ նիւթական արժէքները ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունէութիւն իրականացնելու համար օգտագործելը, որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթիւրել նշուած նիւթական արժէքների կամ դրանց առնչուող իրաւունքների բնոյթը, ծագման աղբիւրները, գտնուելու վայրը, տեղաբաշխումը, շարժը կամ իրական պատկանելութիւնը...»: Այսինքն՝ խօսքը գնում է բացառապէս տնտեսական գործունէութեանը, ինչը կոնկրետ Արզումանեանի վրայ բոլորովին չի տարածուում:

Իսկ ահա հենց այս ձեւակերպման մէջ մտնող հարիւրաւոր գործարքների ակնատեսը մենք լինում ենք ամէն օր: Եթէ մանրամասն ուսումնասիրուի Երեւանի կենտրոնի շինարարութիւնը, ապա կը պարզուի, որ այդ շինարարութեան համար անհրաժեշտ գումարների ծագման աղբիւրը անյայտ է:

Եթէ ուսումնասիրենք, թէ ովքեր են տներ գնում այդ «էլիտար» շէնքերում, ապա կը պարզուի, որ գումարների մեծամասնութիւնը ձեռք է բերուել «անյայտ յանցաւոր ճանապարհով»:

Օֆշորային գօտիներում գրանցուած անյայտ ընկերութիւնների կողմից հայկական ձեռնարկութիւնները ձեռք բերելը եւս փողերի լուացում է: Այսինքն՝ եթէ հարկերից խուսափած հայկական որեւէ օլիգարխ օֆշորային գօտում ընկերութիւն է գրանցում ու ձեռք է բերում հայկական ձեռնարկութիւն եւ հետագայում որպէս օտարերկրեայ ներդրող խուսափում է շահութահարկից, ապա սա հենց փող լուանալ է:

Մի խօսքով, փողեր, եւ ընդ որում՝ մեծ փողեր, Հայաստանում լուացուում են ու նոյնիսկ յետոյ չորացուում ու արդուկուում են: Սա միանշանակ է: Բայց միանշանակ է, որ իրաւապահ մարմինները նոյնիսկ փորձ էլ չեն անում մօտենալ փողերի իսկական լուացման գործարքներին: Փոխարէնը մեր օրէնսդրութիւնը թոյլ է տալիս իր հարազատներին տուն կամ մեքենայ գնելու համար փող ուղարկած, Ռուսաստանում ասֆալտ փողոց ցանկացած խոպանչու եւ նրա ընտանիքի բոլոր անդամներին պատասխանատուութեան կանչել՝ փող լուանալու համար:

ՀԱՅԿ ԳԵՈՐԳԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

«ՕՐԻՆԱԿԱՆ ԴԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ»

Վերջերս հայաստանեան հեռուստաընկերութիւններից մէկով ցուցադրուեց 90-ականների կէսերին ստեղծուած «Վորոշիլովեան հրաձիգ» կինոնկարը: Յիշեցնեմ սիւժէն. պապը, չկարողանալով օրինական ճանապարհով պատասխանատուութեան կանչել իր թոռանը բռնաբարած տականքներին (որովհետեւ վերջիններիցս մէկի հայրը ոստիկանութեան զնդապետ է), որոշում է դատաստան տեսնել սեփական ուժերով: Ֆիլմը ժամանակին մեծ աղմուկ է առաջացրել. ոմանք այն բնութագրում էին որպէս ահաբեկչութեան քարոզչութիւն: Բայց զեղարուեստական ստեղծագործութեան առաքելութիւնը քարոզելը չէ՝ ընդամէնը մարդկանց միտքը շարժելն է:

Ուրեմն, եկէք մտածենք: Ամէն քայլափոխի մեր քաղաքացիները սուժում են իշխանաւորների մեծ ու փոքր կամայականութիւններից: Օրինակ, Քոչարեանի կամակատար Գրիգոր Ամալեանը ցինիկ ժպիտով յայտարարում է, որ 5 տարուց աւելի է՝ գրկում է «Ա1+»-ը եթերից միանգամայն «օրինական հիմունքներով» եւ աւելին՝ պնդում է, որ այսուհետ, նոյն հիմունքներով, յաճախականութիւնների մրցոյթ չի անցկացնի: Չնայած ՀՀ-ում չկայ որեւէ քաղաքացի, որը կասկածում է պարոն Ամալեանի գործողութիւնների իրական դրդապատճառներին, Հայաստանում ոչ մի դատարան նախագահի խամաճիկի դէմ որոշում չի ընդունի: Ինչպէ՞ս վարուել նման դէպքերում: Անհատական ահաբեկչութիւնը բացառում եմ՝ գուցէ ինչ-որ մարդկանց սիրտը հովանայ

ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՐՆԵՐ

Շարունակուած էջ 1-էն

լու նախագահներու յաջորդ հանդիպումը յառաջիկայ ամիսներուն: Համանախագահները կը նկատեն շարք մը մտահոգիչ փաստեր, որոնք կրնան բացասաբար ազդել հասարակական կարծիքի վրայ. «Օրինակ գէնքի օգտագործման սպառնալիքները կը ստեղծեն պատրանք, որ պատերազմը հակամարտութեան տարբերակներէն մէկն է: Լեռնային Ղարաբաղի նախագահի յառաջիկայ ընտրութիւնները արդեն լարուածութեան պատճառ դարձած են»:

Մինսկի խումբի համանախագահները կը կրկնեն, որ իրենց երկիրները պիտի չձանչնան Լեռնային Ղարաբաղի իբրեւ անկախ պետութիւն եւ այդպիսի «ընտրութիւնները» չեն կրնար ունենալ որեւէ ազդեցութիւն հակամարտութեան իսրաղ կարգաւորման վրայ: Վերջաւորութեան համանախագահները կը շեշտեն, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացին մէջ հիմնական դերը վերապահուած է ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահներուն: Անոնք կը յայտնեն, որ այլ կազմակերպութիւններու միակողմանի նախաձեռնութիւնները կրնան մեծցնել լարուածութիւնը եւ քայքայել բանակցային գործընթացը: Համանախագահները կոչ կ'ընեն կողմերուն՝ յառաջիկայ ամիսներուն իրենց ուշադրութիւնը սեւեռել Մինսկի խումբի համանախագահներու կողմէ միջնորդաւորուած բանակցութիւններու ընթացքին իսկական յառաջընթաց ապահովելու վրայ:

դրանից, բայց դա ոչ միայն անօրինական է եւ անբարոյական, այլեւ անիմաստ: Բայց արդարութեանը հասնելու էլ ի՞նչ ճանապարհներ կան:

Փորձենք հարցին պատասխանել՝ բերելով կամայականութեան աւելի տարածուած օրինակ: Այսօր «վերեւների» հովանաւորութիւնը վայելող ցանկացած պաշտօնեայ կամ գործարար կարող է քանդել ցանկացած տուն, կտրել ցանկացած ծառ եւ ցանկացած տարածքում կառուցել այն, ինչ ուզում է: Եւ ոչ մի տուժող չի կարողանայ նրան օրինական ճանապարհով պատասխանատուութեան կանչել, որովհետեւ պետական մարմինները դրա համար անպայման կը գտնեն «օրինական հիմունքներ»: Եթէ «վերեւների ֆաւորիտը» ցանկանայ, ասենք, պայթեցնել այս՝ Մամուլի շէնքը եւ դրա տեղը կառուցել 32-յարկանի «էլիտար շինութիւն», ապա, վստահ եղէք, այդ ֆաւորիտը, յայտնի ճանապարհներով, «կը հանի» բոլոր անհրաժեշտ թղթերը, եւ դատարանը դրանք կը հաստատի:

Ելքերը, ըստ էութեան, երկուսն են. կամ համակերպուել եւ ի վերջոյ հեռանալ երկրից, կամ պայքարել: Առաջին ելքը ընտրածներին բարի ճանապարհ մաղթելով՝ եկէք հասկանանք, թէ պայքարի որ ձեւն է արդիւնաւէտ: Անհատական պայքարը դատապարտուած է. եթէ միայն սուեալ տան բնակիչներն են բողոքելու, «կարմիր բերետաւորները» նրանց պարզապէս արիւնլուսայ կ'անեն: «Քաղաքական» պայքարն էլ է անիմաստ. ամէն մի տան կամ ծառի պատճառով պահանջել «իշխանութեան անյապաղ հրաժարականը» եւ ասել՝ «մինչեւ իշխանափոխութիւն չլինի, ոչ մի հարց չի լուծուի», պարզապէս ծիծաղելի է: Մնում է զանգուածային հասարակական պայքարը: Միայն թէ դրա համար հասարակութիւն է պէտք:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱԻՕՏ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵՆԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ
Դեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ ՊԱՏՐԱՍԵ Է ԻՐ ՎՐԱՅ ՎԵՐՑՆԵԼ «ՅԱՄԱԽՄԲՈՂԻ ԴԵՐԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Ազգային ժողովրդավարական
միություն (ԱԺՄ) նախագահ Վազ-
գեն Մանուկեանը Հինգշաբթի օրը
կրկին հնչեցրեց իր կարծիքը, որ
առաջիկայ նախագահական ընտ-
րություններում ընդդիմութեան
կողմից միասնական թեկնածու առա-
ջադրելը «յաղթող տարբերակ» է:

Ու թէեւ ԱԺՄ-ի առաջնորդը
յստակ պատասխան չտուեց հար-
ցին, թէ կը կարողանայ՞ արդեօք
խորհրդարանական ընտրութիւն-
ներից յետոյ փոշիացած ընդդի-
մութիւնը միաւորել, նա յայտա-
րարեց, որ պատրաստ է իր վրայ
վերցնել ընդդիմադիր ուժերին հա-
մախմբողի դերը:

«Պատասխանատուութեան
հարց է», - ասաց նա: - «Մի քանի
անգամ յայտարարել եմ, որ համա-
ձայն եմ ինձ վրայ վերցնել այդ
պատասխանատուութիւնը... Բայց
ես հասկանում եմ, որ խնդիրը չի
լուծուում մէկ անձով կամ մի ինչ-
որ կուսակցութիւնով: Խնդիրը կա-
րող է լուծուել ամբողջ հասարա-
կութեան եւ ընդդիմադիր այն
ուժերի համախմբումով, որոնք ամ-
բողջովին նոր մոդելի կողմնակիցը
պիտի լինեն: Ներքին համոզուա-
ծութիւն ունեւ, որ 2008 թուին կը
յաջողուի դա անել»:

Վազգէն Մանուկեանը չհեր-
քեց շրջանառուող լուրերը, թէ
ժամանակին ԱԺՄ-ից հեռացած Շա-
լար Քոչարեանը եւ Արշակ Սաղո-
եանը կարող են վերադառնալ ԱԺՄ:
«Չեմ բացառում, որ ոչ միայն
իրենց հետ, այլ նաեւ ուրիշ քաղա-
քական ուժերի հետ հնարաւոր կը
լինի միասնական կուսակցութիւն

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՕՍՆԱԿԸ ԶԱՆԴԻՄԱՆՈՒՄ Է
ԿՈՒԼԻՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հանրապետական կուսակցութեան
(ՀՀԿ) ղեկավարներից Ազգային ժո-
ղովի նախագահ Տիգրան Թորոս-
եանը հանդիմանեց ՀՀԿ-ին կոա-
լիցիոն գործընկերներ ՀՅԴ-ին եւ
«Բարգաւաճ Հայաստան»-ին՝ այս
ամիս աւելի վաղ Ազգային ժողո-
վում «Հեռուստատեսութեան եւ
ռադիոյի մասին» եւ «Պետական
տուրքի մասին» օրէնքներում լրամ-
շակումներ առաջարկող՝ կառավա-
րութեան ներկայացրած օրինագ-
ծերի քուէարկութիւնը տապալելու
համար:

«Գործընկերութիւնը չի կա-
րող նման վարուելաձեւի վրայ
հիմնուած լինել», - լրագրողների
հետ հանդիպմանը ուրբաթ օրը
ասաց Տիգրան Թորոսեանը: - «Հա-
մաձայնութիւնը՝ համաձայնութիւն
է, կոալիցիան՝ կոալիցիա է, եւ
մնացած բոլոր պայմանաւորուա-
ծութիւնները պէտք է յարգուեն»:
Նրա խօսքերով, քուէարկու-

ստեղծել», - ասաց Մանուկեանը՝
շարունակելով. - «Դրա ժամանա-
կը եկել է... Քաղաքական դաշտում
պէտք է լինեն 4-5 ուժեր, մեծ
կուսակցութիւններ, որոնք տար-
բերում են իրենց գաղափարնե-
րով, եւ ոչ թէ 50»:

Մանուկեանն ասաց, թէ դե-
ռեւս լրջօրէն չի մտածել նախկին
նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի
հնարաւոր վերադարձի մասին, քանի
որ վերջինս շարունակում է լուել.
- «Լեւոն Տէր-Պետրոսեանը 10
տարի լուել է, ոչինչ չի ասում:
Կողքին մարդիկ են յայտնուել,
որոնք քաղաքական դաշտի բոլոր
ընդդիմադիր գործիչներին խփում
են՝ դաշտը ազատելու համար Լեւոն
Տէր-Պետրոսեանի վերադարձի հա-
մար: Եւ դրանով ծառայում են
ամենաշատը հենց իշխանութիւն-
ներին»:

Հարցին, թէ ի՞նչ է հարկաւոր
անել ներկայ իշխանութիւնների
դէմ պայքարում հասարակութեան
աջակցութիւնը ստանալու համար,
ընդդիմադիր գործիչը պատաս-
խանեց. - «Այսպիսի իշխանու-
թիւնների դէմ պէտք է մի հսկայա-
կան կուսակցութիւն, որը իր մէջ
կը ներգրաւի հասարակութեան
հսկայական ուժեր՝ տասնեակ հա-
զարաւոր, հարիւր հազարաւոր
մարդկանց: Այդպիսի կուսակցու-
թիւն, ցաւօք սրտի, Հայաստանում
չկայ: Ժողովուրդը կ'ուզենար իր
առջեւ տեսնել մէկ միասնական
թիւ, տեսնել ընդդիմադիր ուժերի
համագործակցութիւն: Եթէ այդ-
պիսի բան չլինի, ապա նորից
ժողովրդի կամքը մի քիչ փոշիա-
ցած կը լինի»:

Թիւնից բացակայելը չի նշանա-
կում կողմ լինել «Ազատութիւն»
ուղիորկայանի հեռարձակմանը, եւ՝
հակառակը. - «Բացարձակապէս
այդպէս չէ»:
«Ուղղակի սեփական պատաս-
խանատուութեան խնդիրը կայ», -
շարունակեց Թորոսեանը: - «Եթէ
ինչ-որ մարդիկ ինչ-որ պատր-
ուակներով չեն ուզում իրենց տե-
սակէտը արտայայտել, դա դեռ չի
նշանակում, որ իրենք ճիշդ տեսա-
կէտ ունեն»:

Նրա կարծիքով, ՀՅԴ-ն եւ
«Բարգաւաճ Հայաստան»-ը «Ազա-
տութիւն» ուղիորկայանի «ամե-
նամոլի պաշտպանները չեն»:

Թորոսեանը բացասական պա-
տասխան տուեց հարցին, թէ արդ-
եօք կառավարութիւնը այդ օրի-
նագծերը կրկին կը ներկայացնի
խորհրդարանի քննարկմանը՝
պարզաբանումների համար խոր-
հուրդ տալով դիմել կառավարու-
թեանը:

«ՄԵՉ ԶՆԱՐԱԻՈՐ ՉԻ ԿՈՏՐԵԼ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Մենք
դադար չունենք, մեր պայքարը
շարունակուելու է մինչեւ մեր նպա-
տակները իրագործուումը. - Յուլիս
13-ին Ազատութեան հրապարա-
կում յայտարարում էր Նիկոլ Փա-
շինեանը, - Կոտրուած իշխանու-
թիւնը փորձում է կոտրել ժողովր-
դին, բայց ես որպէս ժողովրդի
հասարակ ներկայացուցիչ յայտա-
րարում եմ՝ մեզ հնարաւոր չի
կոտրել»: Այս յայտարարութեանը ան-
միջապէս հետեւեց շուրջ 200 քա-
ղաքացիների ծափահարութիւններն

ու «այո»-ները:
Նիկոլ Փաշինեանը ժողովր-
դին տեղեկացրեց, որ հանրահա-
ւաքներ են կազմակերպուում Երե-
ւանի տարբեր թաղամասերում եւ
կոչ արեց միանալ իրենց: Վերջինս,
խօսելով ընդդիմութեան միասնա-
կան թեկնածուով հանդէս գալու
մասին, ասաց, որ. «Այս հարցի
շուրջ որոշակի տարօրինակ միջո-
րոտ կայ»: «Քաղաքական որոշ
ուժերին թուում է, որ մենք, միաս-
նական թեկնածուով հանդէս գալը
առաջ քաշելով, նրանց հրաւիրում

ԼՐԱԳՐՈՂԻՆ ՆՈՐԻՑ ԿԱՆՉԵԼ ԵՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Դեռ
մի դատական քաջքշուկից չազատ-
ուած, «Առաւօտ», «Չորրորդ իշ-
խանութիւն» թերթերի ֆոտոթղ-
թակից Գագիկ Շամշեանին կրկին
ներքաշում են իրաւական վէճերի
մէջ: Յուլիս 16-ին Շէնգաւիթի
ոստիկանութիւնից են զանգահա-
րել Շամշեանին, հրաւիրել բաժին:
«Քննիչ Գալստեանը զանգա-
հարեց, թէ դու պէտք է ներկայա-
նաս ոստիկանութիւն, որովհետեւ
քաղաքացին բողոքել է, որ 10
տարի առաջ իր սպանուած տղայի
դիակը նկարել ես», - «Ա1+»-ին
պատմեց լրագրողը: Շամշեանն այ-
սօր չի ներկայացել Շէնգաւիթի
ոստիկանութիւն, որովհետեւ
գտնուում էր դատարանում՝ այլ
գործով:

«Վաղը գնալու եմ եւ հրա-
ժարուելու եմ ցուցմունք տալ՝
քրէական դատավարութեան
օրէնսգրքով առաջնորդուելով, ասե-
լու եմ՝ ուղարկէք դատարան, ես
դատարանում կ'ապացուցեմ ինչ-
որ պէտք է, - քննիչի հետ ունեցած
իր գրոցն է մեզ ներկայացնում
Գագիկ Շամշեանը, - «Հայլուրը Հոկ-
տեմբերի 27-ին ցոյց տուեց, թէ ոնց



Ֆոտոթղթակից Գագիկ Շամշեան

է կարէն Յունանեանները աւտոմա-
տով խփում վարչապետին, դիակ-
ները խոշտանգում: «Հայլուրին»
չեն դատում, թէ ինչի ես ցոյց
տուել, ինձ ասում են, ինչի ես
դիակ նկարել՝ 10 տարի առաջ:
Պէտք եղաւ այսօր էլ կը նկարեմ»:

Իսկ այսօր Զինուորական եւ
քրէական գործերով վերաքննիչ
դատարանում լուում էր Շամշեանի
բողոքը էրեբունի-Նուբարաշէն հա-
մայնքների առաջին աստեանի դա-
տարանի որոշման կապակցու-
թեամբ:

ՊԱՐՍԻԿՆԵՐԸ ՏՈՒՆ ԵՆ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Հա-
յաստանում արդէն 10 տարուց
աւելի մանր բիզնեսով զբաղուող
պարսիկ առեւտրականները դժգո-
հում են, որ իրենք արդեն վնասով
են աշխատում:

«Սուրմայրու» կոչուող հատ-
ուածի խանութները, որտեղ նախ-
կինում հիմնականում իրանցիներ
էին աշխատեցնում, հիմա աւելի
հայկական է դարձել: Ծառ քչերում
կարելի է պարսիկի հանդիպել: «Էլ
ձեռք չի տալիս, երեւի թողնենք
հեռանաք», - «Ա1+»-ին անկեղծա-
ցաւ պարսիկ էլհամը, որը արդէն
12 տարի է Հայաստանում է. «Ար-
դէն հայ եմ, չնայած արեանս մէջ
հայկական որեւէ գիծ չկայ: Բայց
վատ է, քանի որ առաջ չնչին
գումարներ էինք տալիս վարձա-
կալութեան համար, իսկ այսօր
թուերը խիստ են բարձրացել»:
Վերջինս Պարսկաստանից տար-
բեր տեսակի ապրանքներ է ներ-
մուծում եւ, ըստ նրա, վաճառում
շուկայականից անհամեմատ էժան
գներով:

Դժգոհում է նաեւ նրա հարե-
ւան խանութպանը Աջիփը: Վեր-

ջինս եւս ստիպուած է հեռանալ
Հայաստանէն. «Հարկայինը այն-
քան է վերցնում, որ ստիպուած եմ
հարազատներիցս գումար ուզել, որ
փակուեմ: Դրան գումարած մաք-
սատան գումարները եւ տեղի վար-
ձը: Սեփականատէրը սկզբում ցածր
էր ուզում, յետոյ դարձրեց 100
հազար, իսկ հիմա 270 հազար եմ
տալիս: Էլ ինձ տակը ինչ կը մնայ»:

Ի դէպ, նրանց հարեւանու-
թեամբ աշխատող մի հայ կին
յայտնեց, թէ հարկային համակար-
գի աշխատակիցները պարսիկնե-
րին վատ են վերաբերում, դա է
նրանց հեռանալու պատճառը: Նա
նշեց, թէ եթէ հարկայինից գալիս
եւ տեսնում են պարսիկ է, ապա
աւելի շատ են զանձում: «Ես
աշխատացնում եմ պարսիկի խա-
նութ: Երբ հարկայինից, ոստիկա-
նութիւնից կամ հրէջջ կայանից
գալիս են, ինձ են տեսնում, խօսել
չեն կարողանում, իսկ երբ խանու-
թի տէրը պարսիկն է լինում, ամէն
ինչից կառչում են: Անգամ տուն
վարձելիս՝ եթէ օտարազգի ես, 100
տոլարից պակաս վարձ չեն ու-
զում», - ասաց նա:

ԳԻՄՐԻՈՒՄ ԱՄՏՈՎԹԱՐԻՑ ԶԻՆԳ ՄԱՐԴ Է ՁՈՅՈՒԵԼ

Գիւմրիում կիրակի, Յուլիս 15-ին տեղի ունեցած աւտովթարի
հետեւանքով գոհուել է հինգ մարդ:

Համաձայն Հայաստանի ոստիկանութեան օպերատիւ ամփոփագրի,
քաղաքի Երեւանեան խճուղում 38-ամեայ Համլետ Թուրխալեանի վարած
«Մերսեդես-Բենց-124» մակնիշի աւտոմեքենան բախուել է ծառին, ինչի
հետեւանքով վարորդը եւ չորս ուղեւորներ, որոնցից մէկը՝ 7-ամեայ
Ռաֆիկ Թուրխալեանը, տեղում մահացել են, իսկ եւս երկուսը
տեղափոխուել են հիւանդանոց:

ին Միաբանութիւն», «Հանրապե-
տութիւն», «Նոր ժամանակներ»
կուսակցութիւններ-իւմբ.) արդէն
միաւորուել են «Իմպիւլսմետ» հա-
սարակական քաղաքական նախա-
ձեռնութեան հետ: Չի կարելի ասել,
թէ միւս ուժերի միջեւ անհամա-
ձայնութիւն կայ. բանակցութիւն-
ների գործընթացը դեռեւս շարու-
նակուում է»:

Հանրահաւաքի վերջում Նի-
կոլ Փաշինեանը պատասխանեց
մարդկանց հարցերին եւ լսեց նրանց
առաջարկները:

ենք մեր հողամասում բանուորու-
թիւն անելու», - ասաց Փաշինեանը:
Նշելով, որ միասնական թեկ-
նածուով հանդէս գալը ժողովրդի
պահանջն է, նա ասաց, «Միասնա-
կան թեկնածուով հանդէս գալով՝
ոչ ոք ինձ լաւութիւն չի անում եւ
այդ գաղափարը մերժելով՝ վա-
տուութիւն չի անում»:
Երբ Փաշինեանից հարցրե-
ցինք, թէ որ քաղաքական ուժերի
հետ չի յաջողուել համաձայնու-
թեան գալ, նա ասաց. «Չորս
քաղաքական ուժեր (ՀԺԿ, «Ազգա-

ԼՈՒՐԵՐ

ՍԱՖԱՐ ԱԲԻԵԻ. «ՅԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՏ ԽԱՂԱԴ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՅԱԲԵՐԺ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԵԼ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ատրպեյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Աբիեւը վրաց պաշտօնակից Դաւիթ Կազերաշվիլիի հետ Պաքուէ կայացած հանդիպման ժամանակ յայտարարել է, թէ «Հայաստանի հետ խաղաղ բանակցութիւնները չեն կարող յաւերժ շարունակուել»:

Նշելով, որ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակներում դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնները շարունակուել են, եւ «Ատրպեյճանը գերադասում է խնդրի խաղաղ կարգաւորում», ատրպեյճանական ռազմական գերատեսչութեան ղեկավարը յաւելել է. - «Խաղաղ բանակցութիւնները չեն կարող յաւերժ շարունակուել: Հայաստանը

պէտք է ազատի Ատրպեյճանի գրաւեալ տարածքները՝ հետեւելով միջազգային իրաւունքի նորմերին»:

«Հայաստանը պէտք է համապատասխան հետեւութիւններ անի խաղաղ բանակցութիւնների արդիւնքներով, հակառակ դէպքում Ատրպեյճանը կ'ազատագրի իր տարածքները», - «Թրենդ» գործակալութեան վկայութեամբ՝ ասել է Աբիեւը:

Վրաստանի պաշտպանութեան նախարարը Պաքու է ժամանել այսօր: Ըստ ատրպեյճանական աղբիւրների, այցի օրակարգում են ՎՈւԱՄ-ի խաղաղարար ուժերի ստեղծման, ռազմատեխնիկական բնագաւառում համագործակցութեան եւ տարածաշրջանային անվտանգութեան հետ կապուած հարցեր:

ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՊՆԴՄԱՄԲ, ԻՐ ՊԱՇՏՊԱՆԵԱԼԻՆ ՄՈՍԿՈՒՎՅԻՑ ԳՈՒՄԱՐ ՈՒՂԱՐԿՈՂԸ ԼԵՒՈՆ ՄԱՐԿՈՍԸ ՉԻ ԵՂԵԼ

Մայիսի 10-ին «փողի լուսցման» մեղադրանքով կալանաւորուած Հայաստանի նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանի շահերի պաշտպան Հովիկ Արսէնեանը «Ազատութիւն» ռազիոկայանի հետ գրոյցում ուրբաթ օրը ասաց, որ իրեն «հաստատապէս յայտնի է», որ Մոսկուայում հարցաքննուել է Սաշիկ Աղազարեանը եւ հաստատել է մամուլում հրապարակած իր յայտարարութիւնը, որ գումար է ուղարկել ռուսաստանական տարիների ընկեր Ալեքսանդր Արզումանեանին՝ վերջինիս խնդրանքով:

«Ակնյայտ դարձաւ, որ գումարն ուղարկել է ոչ թէ Ռուսաստանի դաշնութեան քաղաքացի, հայազգի մէկ այլ գործարար Լեւոն Մարկոսը, այլ հենց Սաշիկ Աղազարեանը», - յաւելեց Արսէնեանը:

Փաստաբանի խօսքերով, Մայիսի 7-ին ձերբակալուելուց ի վեր Արզումանեանը հարցաքննուել է 4 անգամ: Վերջին հարցաքննութեան ժամանակ, նախկին արտգործնախարարը, ինչպէս եւ նախորդ հարցաքննութիւնների ժամանակ, կրկին հրաժարուել է ցուցմունք տալ: Իսկ նախորդ հարցաքննութիւնների ժամանակ ընդամենը խորհուրդ էր

տուել նախաքննութեան մարմին հարցաքննել Մոսկուայում ապրող հայազգի գործարար Սաշիկ Աղազարեանին՝ յաւելելով. - «Դուք կը տեսնէք, որ իմ անմեղութիւնը կը հաստատուի»:

Ըստ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան՝ Մայիսին տարածած հաղորդագրութեան՝ «2007-ի Ապրիլի 24-26-ին Վահան Շիրխանեանը եւ Ալեքսանդր Արզումանեանը գտնուել են Մոսկուայում եւ, համաձայնութեան գալով 2005 թուականից ֆինանսական զեղծարարութեան համար հետախուզման մէջ գտնուող Ռուսաստանի Դաշնութեան քաղաքացի Լեւոն Մարկոսի հետ, կասկածելի ծագում ունեցող գումար են տեղափոխել Հայաստան»:

«Ազատութիւն» ռազիոկայանի հարցին, թէ այդ դէպքում ինչու է Ազգային Անվտանգութեան Ծառայութեան քննչական խումբը շարունակում ոչ միայն քննչական հետապնդում իրականացնել, այլեւ անազատութեան մէջ պահել Ալեքսանդր Արզումանեանին, Հովիկ Արսէնեանը պատասխանեց. - «Ասել են, թէ քննչական գործողութիւնները շարունակուած են, ստուգուած են տուեալները»:

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԿԸ ՍԵՂԱԴՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՐԿՈՍՊԱՆԸ ՀՈՎԱՆԱԲՈՐԵԼՈՒ ՄԵՋ

Շարունակուած էջ 1-էն
տօնեաներ հաւանութիւն տուած էին սպանութեան:

«Պաշտօնեաները կ'ողջունէին սպանութեան մէջ կասկածեալին՝ որպէս ազգային հերոս եւ հերթի կը կանգնէին անոր հետ

լուսանկարուելու համար», - կը յայտնեն Տինքի ընտանիքի փաստաբանները, 21 սուրիկաններու դէմ ներկայացուած դիմումին մէջ:

Թուրքիոյ իրաւապահ մարմինները նաեւ կը քննադատուին, որ չեն կանխած Տինքի սպանութիւնը՝ հակառակ որ, տեղեկութիւններ ու-

ԾԵԾՈՒԵՑԻՆ ԿԱՆԱՉ ԳՕՏԻՆ ՓՐԿԵԼՈՒ ԶԱՄԱՐ



Յուլիս 16-ին մայրաքաղաքում կառուցապատման համար հերթական կանաչ գօտին էր ոչնչացուած: Մարդու իրաւունքների Պաշտպանի գրասենեակի հարեւանութեամբ գտնուող Պուշկինի 43, 45 եւ 54 շէնքերի այս բնակիչները կանգնել էին տրակտորի դիմաց՝ ասելով, որ իրենք միայն իրենց դիակի վրայով կը թողնեն բակի ծառերը հատել եւ մշակած այգին ոչնչացնել: Այստեղ պատրաստուած են բակի հաշուին շէնք կառուցել: Երէկ բնակիչների եւ ոստիկանների միջեւ անգամ բախում տեղի ունեցաւ: «Կարծիր բերեալները», բացի այն, որ ջանասիրաբար պաշտպանում էին կառուցապատողի շահերը՝ թողնելով, որ ծառերն անխնայ հատուեն, ըմբոստացող կանանց ծեծելով ու քաշքշելով հեռացնում էին տրակտորի առջեւից:

ԴԱՏԱՐԱՆԸ ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ՎԵՒՈՒ Է ԿԱՅԱՑՆՈՒՄ «ՌՈՒԵԱԼ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ԳՈՐԾՈՎ

Գրեթէ երկու տարի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան մեկուսարանում անցկացնելուց յետոյ «Ռուէալ Արմենիա» ընկերութեան ղեկավարները՝ Գագիկ Յակոբեանն ու Արամ Ղազարեանը, երկուշաբթի օրը ազատ արձակուեցին Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին աստեանի դատարանի դահլիճից:

«Ռուէալ Արմենիա»-ի ղեկավարները մեղադրուած էին մաքսանենգութեան, հարկերից խուսափելու, փաստաթղթեր կեղծելու մէջ: Մեղադրող կողմը նրանց համար պահանջում էր երկարատեւ ազատագրկում: Մեղադրեալները չէին ընդունում իրենց մեղքը՝ պնդելով, որ գործը իրենց նկատմամբ «սարքուել է»:

Ընկերութեան ներկայացուցիչները բազմիցս հրապարակաւ յայտարարել են, որ ընկերութեան ղեկավարութեան նկատմամբ հետապնդումները սկսուել են այն բանից յետոյ, երբ նրանք մաքսային կոմիտէի աշխատակիցներին մեղադրել են կաշառակերութեան մէջ:

«Ռուէալ Արմենիա»-ի ղեկա-

վարների փաստաբան Աշոտ Սարգսեանը «Ազատութիւն» ռազիոկայանի հետ գրոյցում ասաց, որ նման օբիեկտիւ դատավճիռ իր փաստաբանական պրակտիկայում չի մտաբերում. - «Այս քրէական գործը միայն կարող էր աւարտուել արդարացի դատավճռով: Ինձ համար դա սպասելի էր այն առումով, որ քրէական գործի դատաքննութեան ընթացքում ամբողջովին պարզուեց, որ քրէական գործը շինծու է»:

«Ինձ համար անսպասելի էր միայն այն, որ այս երկրում կարող է արդարացի դատավճիռ լինել», - յաւելեց նա:

Դատարանը նաեւ որոշեց ակնյայտ կեղծ վկայութիւն տալու համար քրէական գործ յարուցել գործում որպէս տուժող ընդգրկուած, «Ռուէալ Արմենիա»-ին նախկինում սուրճ մատակարարող ՖԻԳ ընկերութեան ղեկավար Վաչէ Պետրոսեանի դէմ:

Գլխաւոր դատախազութեան մամուլի խօսնակը «Ազատութիւն» ռազիոկայանին փոխանցեց, որ դատախազութիւնը վերադասատեանում բողոքարկելու է առաջին աստեանի դատարանի վճիռը:

նէին Տրապիզոնի մէջ նախապատրաստուող մահափորձի մասին:

Հրանդ Տինքի սպանութեան մէջ 18 մեղադրեալներու դատաւարութիւնը սկսած էր Յուլիս 2-

ին, ապա յետաձգուած՝ մինչեւ Հոկտեմբեր, ընդունելով քննութիւնը ընդլայնելու մասին Տինքի ընտանիքի փաստաբաններու միջնորդութիւնը:



ԱԶԳԱՅԻՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԱԼԵՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԱՄՓՈՓԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

Մեծարգոյ Նախագահ,
Սիրելի Մանուկեան ընտանիքի բարեպաշտ ժողովուրդ հայոց.
Օրն այս յիշարժան է, իր խորհրդով նշանակալի ու նուիրական: Աստծոյ ողորմութեամբ կատարուեց ցանկալին. մեր ժողովրդի նուիրեալ զաւակներ, ազգի եւ մեր եկեղեցու մեծ բարերարներ Ալեք եւ Մարի Մանուկեանները իրենց վերջին հանգրուան են գտնու մ'Հայրենիքի ազատ հողում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքոյ, Արարատի հայեացքի առջեւ:

Այսօր, երբ կանգնած ենք նրանց յուսաւոր յիշատակի առջեւ, համակու մ ենք ազգին մատուցած ծառայութիւններով լեցուն նրանց կեանքի եւ արժանաւոր բազում գործերի անհուն գնահատանով:

Մեծ ծառայութիւն էր վերապահուած Ալեք Մանուկեանին մեր ժողովրդի կեանքում, որը նա յանձն առաւ օրինակելի նուիրումով ու պատրաստակամութեամբ: Վսեմ տեսիլով նա քաջադիպ ներդրում ու վաստակ բերեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան առաջնութեանը՝ արժանանալով Միութեան ցկեանս Նախագահի բարձր պատուին: Ալեք Մանուկեանի նախանձախնդիր դեկավարութեամբ ընդարձակուեց ու ծաղկում ապրեց Բարեգործականի համագային գործունէութիւնը՝ Մեծ եղեռնին յաջորդած տասնամեակներում աշխարհասփիւռ հայութեանը օտարափերում առաւելագոյնս սատարելու եւ միասնական պահպանելու: Սփիւռքի կեանքում ազգային շատ կառոյցների կողմէն նա առանձնակի կարեւորեց հայ դպրոցն ու հայոց եկեղեցին, որպէսզի հայրենեաց ծառայութիւնը անաղարտ պահպանուի ու փոխանցուի սերունդներին, հայկականութեամբ սնուցի եւ հաւատով զօրացնի հայորդեաց հոգիները:

Որդիական ջերմ սիրով Ալեք եւ Մարի Մանուկեանները հոգացին ու ջանացին Սուրբ Էջմիածնի պայծառութեան համար: Նրանց անունները անրաժան են Մայր Աթոռի պատմութիւնից, ինչպէս նրանց կեանքը անրաժան եղաւ Մայր Աթոռի առաջնութիւնից: Այն օրերին, երբ երկաթեայ վարագոյրով անջրպետուած էր Հայաստանի եւ աշխարհասփիւռ հայութեան կեանքը, Ալեք Մանուկեանը, իրրեւ հարազատ զաւակը իր ժողովրդի, միշտ կապուած եղաւ Հայրենիքի հոգսերին ու ապրեց նրա յոյսերով: Ապրեց ու գործեց մեր ժողովրդի միասնութեան, Հայրենիքի ազատութեան եւ հայ կեանքի զարթոնքի հաւատով: Արդարեւ, դժուար է գտնել նշանակալի դէպքեր մի քանիստ: Սակայն՝ երբեք չենք մոռցել նրանց կեանքում մեր կեանքում մեծ նշանակալի դէպքերը: Նրանց կեանքը՝ Մարի Մանուկեանի արժանաւորութեամբ շլինի Ալեք Մանուկեանի անունը: Նորակալս մեր Հայրենիքը արժանիօրէն գնահատեց Ալեք Մանուկեանի ծառայութիւնները եւ անդր ազգային կեանքում շնորհելով նրան Ազգային հերոսի բարձր կոչումը: Հայրենանուէր ու եկեղեցասէր ծնողների նոյն հոգեկերտումով ու ազնիւ նախանձախնդրութեամբ այսօր նրանց զաւակները՝ Ռիչարդ Մանուկեանը եւ Լուիզ Մանուկեան Սիմոն իրենց բարեգործութիւններով շարունակում են ծառայել մեր ժողովրդին՝ նոր անդր բերելով մեր Սուրբ եկեղեցու պայծառութեանը եւ մեր Հայրենիքի բարօրութեանն ու առաջընթացին:

Ուրախ են մեր հոգիները այսօր՝ ամփոփուած տեսնելով Ալեք եւ Մարի Մանուկեանների մարմինները իրենց համար միշտ նուիրական հայրենի հողում, իրենց սրտերին շատ սիրելի Սուրբ Էջմիածնում, որոնցից երբեք բաժանուած չեղան: Սերնդէ-սերունդ մեր զաւակները պիտի այցելեն այստեղ նրանց նուիրատուութեամբ կառուցուած Գանձատուն: Գան խոնարհուելու նրանց շիրիմներին: Պիտի աղօթեն նրանց միջոցներով նորոգուած եւ կառուցուած եկեղեցիներում, ուսանեն նրանց հովանաւորութեամբ գործող կրթական հաստատութիւններում, պիտի ներշնչուեն նրանց բարի գործերով, ազգասէր, հայրենասէր ու եկեղեցասէր ոգով ու օրինակով նրանց, ովքեր «Մահկանացու ծնուած՝ անմահ յիշատակ բողբջին»: Այսպէս է կանգուն ժողովուրդը՝ նուիրումով, ծառայութեամբ, ազնիւ ու պանծալի գործերով եւ դրանց գնահատութեամբ ու արժեւորումով՝ սերնդէ-սերունդ: Այսպէս է օրինեալ ժողովրդի կեանքն ու նանապարհը, քանզի «Եթէ ուրում գործն գոր շինեաց՝ կացցէ, վարձս աոցէ» (Ա. Կորնթ. Գ 14):

Աղօթենք եւ հայցենք լոյս եւ օրհնութիւն մշտնջենական՝ ազգային բարերարների արդար հոգիներին:

Գոհութեան աղօթք բարձրացնենք երկինք, որ Տէրը օրհնել է մեր ժողովրդին նուիրեալ զաւակներով եւ նրանց յոյսերով, նրանց հաւատով ու ջանքերով առաջնորդել ազգս դէպի նոր արշալոյս, որ շողում է մեր պետականութեան վերականգնումով, Արցախի ազատագրութեամբ եւ



Սփիւռքի յառնող ու ծաղկող կեանքով: Շնորհ, սէր եւ օրհնութիւն Տեառն մերոյ եւ Փրկչի Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեւեան: Ա.մէ.ն:

Advertisement for AIA Insurance. It features the AIA logo on the left, a large stylized number '30' in the center, and a silhouette of a person on the right. The text is in both Armenian and English. The Armenian text reads: 'ԱՊՐԱՆՈՒՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԲԱՅՆՆԵՑ Է' (Insurance is the most reliable). The English text reads: 'ONE EIGHT HUNDRED FOUR THAI-TAG'. At the bottom, it provides contact information: '811 500-8635' and 'AIA Insurance Services 88 E. Broadway, Boston, MA 02109'.

ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԵՆ ՄԻՆՉԵՒ ԱԼ ԿՈՐ

ՀԱՄԱՐՁՈՒՄ ՄԱՐԱՑՆԵԱՆ

Որքան Հայաստանի նախագահական ընտրությունները կը մօտենան, այնքան Լեւոն Տէր-Պետրոսեանի հաւանական թեկնածութեան շուրջ կատարուող ասեկոսները կը սաստկանան: Այս երեւոյթը հետաքրքրական է այն առումով, որ բացի ինքզինքն առարկայ անձէն, բոլորը կարծէք ստուգապէս գիտեն կամ համոզուած են, որ ան ա՛յս անգամ անպայման պիտի դնէ իր թեկնածութիւնը: Անշուշտ այդ նոյն մարդիկ, նման փաստարկներով կանխատեսած էին անոր թեկնածութեան անխուսափելիութիւնը նաեւ 2003 թուականի նախագահական ընտրութիւններուն: Սակայն ինչպէս դէպքերը ցոյց տուին, նման բան տեղի չունեցաւ:

Հարց կը ծագի, արդեօք ի՞նչ բանը կը մղէ մարդոց տակաւին հաւատարմութիւն, որ աւելի քան տասը տարիներ առաջ քաղաքական ասպարէզէն հեռացած նախկին նախագահը պիտի ուզէ կրկին ստանձնել երկիրը ղեկավարելու այդ ծանր բեռը: Յատկանշական չէ՞ արդեօք, որ այսքան տարիներ անց՝ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ դեռ գոյութիւն ունի լայն զանգուած մը որ ուղղակի համոզուած է, որ Լեւոն Տէր-Պետրոսեանին այլընտրանք չկայ: Եւ եթէ այդպէս է, ապա սա պէտք է դրակա՞ն երեւոյթ համարել, թէ գայն պէտք է ընդունիլ որպէս ապագայի նկատմամբ յոյսը կորսնցուցած հասարակութեան մը օգնութեան աղերս:

Նմանօրինակ երեւոյթ այսօր կը զարգանայ հոս, Ամերիկայի մէջ, նախկին փոխ նախագահ՝ Ալ Կորի 2008ի նախագահական ընտրութիւններուն հաւանական թեկնածութեան կապակցութեամբ: Ու հակառակ այն հանգամանքին, որ Հայաստան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ տրամագծօրէն տարբեր քաղաքական համակարգ ու արժէքներ ունեցող երկիրներ են, սակայն եւ այնպէս կան շատ հետաքրքիր գուզահեռները: Առաջինը՝ երկու երկիրներու վարչակարգերու ցած վարկանիշն է: ԱՄՆ-ի պարագային, այդ մեծ մասամբ արդիւնքն է Պուշի վարած ապիկար արտաքին քաղաքականութեան՝ մասնաւորապէս Իրաքի կործանարար ու անիմաստ պատերազմին, որ կարծեցեալ ժողովրդավարու-

թիւն սերմանելու փոխարէն, մահու աւեր կը սփռէ ապակայունացնելով ամբողջ տարածաշրջանը:

Քոչարեանի վարչակարգի վարկանիշը անշուշտ չափելու կարիքը չկայ, որովհետեւ բոլորն ալ գիտենք թէ ինչպիսի կեղծիքներու եւ օրինախախտումներու միջոցով ընտրուած են նախագահն ու Ազգային ժողովի պատգամաւորները: Հետեւաբար, միամտութիւն պիտի ըլլար ակնկալել, որ նման վարչակարգ մը առանձնապէս մտահոգ պիտի ըլլար ժողովուրդի մօտ իր վարկանիշով կամ հեղինակութեամբ:

Երկրորդը՝ վստահութիւն եւ ապագայի նկատմամբ յոյս ներշնչող առաջնորդներու պակասն է: Թէեւ Ամերիկայի յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն իրենց թեկնածութիւնը պաշտօնապէս դրած են աւելի քան մէջ տասնեակ անձեր, ներառեալ այնպիսի կարկառուն քաղաքական դէմքեր ինչպիսիք են՝ Հիլըրի Գլինթոն, Պարազ Օպամա, Ռուտի ձուլիանի կամ ձան Մըքքէյն, սակայն անոնցմէ ոչ մէկը բացարձակ առաւելութիւն ունի իր մրցակիցներու նկատմամբ եւ հրապարակի վրայ զգալի պարտք մը կայ, որ շատերուն կարծիքով լաւապէս կրնայ լեցնել նախկին փոխ նախագահ՝ Ալ Կորը:

Նախագահական ընտրարշաւի պաշտօնական մեկնարկէն ամիսներ առաջ, Հայաստանի մէջ ալ պարագան նոյնն է: Ու թէեւ Հանրապետականներու կարծիքով Սերժ Սարգսեանի ընտրութիւնը անխուսափելի է, սակայն բոլորին համար ալ յստակ է, որ այսօրուայ Հայաստանի ղեկավարներէն ոչ մէկը նոյնիսկ «Քաղաքական Գործիչ»-ի մակդիրին արժանի չէն, այլ պարզապէս անձնական շահը մոլորեցրով հետապնդող գիշատիչներու վոհմակ մըն են: Ահա թէ ինչու անընդհատ կը հռչակուի Լեւոն Տէր-Պետրոսեանի անունը, նոյնիսկ տասը տարի անց:

Վերջին գուզահեռը երկու քաղաքական գործիչներու՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ Ալ Կորի միջեւ է: Հակառակ այն հանգամանքին, որ երկուքն ալ բազմաթիւ առիթներով յայտարարած են, որ քաղաքական ասպարէզ վերադառնալու ցանկութիւն չունին, մարդիկ կարծէք համոզիչ չեն գտներ անոնց մեր-

ժուժը եւ անընդհատ կը փորձեն վերլուծել եւ տարրալուծել անոնց խօսքերը, գտնելու համար իրենց գոհացում տուող պատասխան մը: Իրականութիւնը սակայն շատ աւելի պարզ է եւ ի գուր են կոչերն ու անտեղի է կշտամբանքը անոնց հասցէին, երբ անոնցմէ ուղղակի կը պահանջուի վերջնական պատասխան տալ իրենց հաւանական թեկնածութեան վերաբերեալ, կարծէք անոնք ուրիշ գործ կամ մտահոգութիւն չունին, բացի մարդոց անորոշութեան այս մղձաւանջէն ձերբազատելէ: Անշուշտ անոնց կողմնակիցներուն չափ եւ աւելիով՝ շահագրգռուած են հաւանական հակառակորդները եւ շատ գոհ պիտի ըլլային եթէ իրենց համար ալ յստակ ըլլար այդ պարագան: Դժբախտաբար, մարդիկ երբեմն հարցերը կը դիտեն բացառապէս իրենց տեսանկիւնէն եւ այդ պատճառով ալ իրենց համար անհասկնալի է ե՛ւ Տէր-Պետրոսեանի ե՛ւ Ալ Կորի թուացեալ անտարբերութիւնը նման բացառիկ հնարաւորութեան նկատմամբ:

Ալ Կորի համար, այսօր չկայ աւելի կարեւոր հարց քան երկրագունդի ջերմացման վտանգի դէմ պայքարը: Անոր անդուլ ջանքերու շնորհիւ, այսօր ամբողջ աշխարհը հետաքրքրուած է այդ հարցով եւ արդէն լուրջ քայլեր կ'առնուին այդ ուղղութեամբ: Ան երկրի մը նախագահի չափ յարգանք կը վայելէ ամենուր եւ առ ի գնահատութիւն իր նուիրումին, այս տարուայ Նոյեմբեանի մրցանակի թեկնածու առաջադրուած է: Թէեւ կ'ըսուի որ ան դեռ չէ հաշտուած 2000 թուականի ցաւալի պարտութեան հետ, որ փաստօրէն պարտադրուեցաւ ԱՄՆի Գերագոյն Դատարանին կողմէ, հակառակ ժողովուրդի ձայներու մեծամասնութիւնը վստակած ըլլալուն, սակայն եւ այնպէս ան իր առաքելութիւնը շատ աւելի կարեւոր կը համարէ քան նախագահի պաշտօնը: Կողմնակիցները կ'առարկեն, որ ան որպէս ԱՄՆի նախագահ շատ աւելի արդիւնաւէտ պայքար կրնայ մղել երկրագունդի ջերմացման դէմ, սակայն չի բացառուիր նաեւ հակառակը, երբ որպէս երկրի նախագահ անոր առաջնահեթութիւնները պարտադրաբար փոխուին: Մէկ բան յստակ է, եթէ մնացեալ թեկնածուներուն համար նախագահի


պաշտօնը նպատակ է, ապա իրեն համար պարզապէս միջոց է առաջ տանելու իր առաքելութիւնը: Այնպէս որ, Ալ Կոր պիտի չօժարի մասնակցիլ ընտրութիւններուն միայն այն պարագային երբ իր յաղթանակը անխուսափելի ըլլայ: Այլապէս, անոր քաղաքական ասպարէզ վերադարձը անիմաստ է:

Նոյնն է պարագան նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանի համար: Ըլլալով երրորդ հանրապետութեան առաջին նախագահը՝ ան արդէն իսկ ապահոված է իր աւանդը եւ հակառակ իր իշխանութեան ժամանակ տեղի ունեցած անիրաւութիւններուն եւ անարդարութիւններուն, ան պատմութեան մէջ առնուազն պիտի չիշուի որպէս՝ դեռ նորածին Հայաստանի Հանրապետութեան պետականութիւնը եւ միջազգային վարկը ամրապնդող նախագահ, որ փոխանակ ի գին ամէն ինչի աթոռին կառչած մնալու, խոհեմութիւնը ունեցաւ հրաժարելու, երկրի շահերը վեր դասելով իր անձնականին:

Ներկայ պայմաններու տակ անհնար է պատկերացնել անոր քաղաքական ասպարէզ վերադարձը, նոյնիսկ եթէ, իր խօսքերով «Ազգը ինդրէ»: Ըստ իս, անոր համար շատ դժուար պիտի ըլլայ գտնել «Ինչու՞ վերադառնալ» հարցին պատասխանը: Դժբախտաբար, այսօրուայ Հայաստանը բոլորովին տարբեր է 1997ի Հայաստանէն, երբ երկրի դիրքերը՝ Ղարաբաղեան հարցի կարգաւորման եւ տարածաշրջանի ընդհանուր գործընթացներու առումով շատ աւելի բարենպաստ եւ զօրեղ էին: Ուրեմն լոկ ժողովուրդի փափաքին անսալը բաւարար պիտի չըլլայ արդիւնաւէտ կերպով առաջնորդելու, եթէ ան ուղղեկցուած չէ գերտէրութիւններու աներկբայ նեցուկով, եւ երկրի պետական կառուցներու, մասնաւորապէս Ազգային ժողովի ու ուժային գերատեսչութիւններու՝ իր հետ գործակցելու երաշխիքով: Եթէ չկան վերոյիշեալ պայմանները, որ ներկայիս պարզապէս անհնար է պատկերացնել, ապա ուրեմն անոր վերադարձը նոյնպէս անիմաստ է:

Կը մնայ եզրակացնել, որ այս անգամ եւս Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածու ըլլալը-չըլլալը՝ ակադեմական բանավէճի նիւթ ծառայելէն զատ որեւէ այլ գործնական արժէք պիտի չունենայ:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

ԻՐԱԿԱԲԱՆ ՎԱՐԴԳԷՍ ԵՂԻԱՅԵԱՆԻ ԳՈՎԵԼԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Գաղութային մեր կեանքին մէջ տեսակաւոր ձեռնարկներ կը պատահին: Այս ձեռնարկներէն շատերը լուրջ հանգամանք չունին, ըլլալով կամ ճաշկերութեան, կամ ընկերային, եւ կամ ալ ակումբային: Կան սակայն ուրիշ ձեռնարկ-նախաձեռնութիւններ որոնք նպատակասլաց են, գովելի, հետաքրքրական եւ դատարարական: Դժբախտաբար այս երկրորդ կարգի ձեռնարկները հազուադէպ են, եւ սակայն պարբերաբար տեղի կ'ունենան:

Այս երկրորդ տեսակի ձեռնարկ մըն էր որուն ներկայ եղանք Ուրբաթ, 13 Յուլիս 2007 թուին, երեկոյեան ժամը 7-9ը, Central պողոտայի «Phenicia» ճաշարանին ներս:

Ձեռնարկի նախաձեռնողն էր ծանօթ իրաւաբան, վարդգէս Եղիայեան, որ թէեւ գաղութին ներս, ինք միշտ ունեցած է խիստ օգտակար ներկայութիւն եւ սակայն վերջին տարիներուն, յատկապէս Եղեռնի գոհերուն իրաւունքներու պաշտպանութեան գծով, ապահովագրական ընկերութեանց մօտ, ինք իր գործակից իրաւաբաններով, բարոյական եւ նիւթական յաջողութիւն կ'արձանագրէ, ի նպատակ գոհերու վերապրողներուն:

Վերոյիշեալ ձեռնարկը սակայն քիչ մը տարբեր բնոյթ ունէր: Ան կը ներկայացնէր իրաւաբան Եղիայեանի հիմնած «CAR» (Center for Armenian Remembrance) հիմնարկը, որ նուիրուած է, ինչպէս բանաձեւուած է, «անցեալը յիշելու եւ ապագան կերտելու»:

Ուրեմն «CAR»-ի հովանաւորութեամբ տեղի ունեցող երեկոն նուիրուած էր արտասահմանի մէջ գործող եզակի հաստատութեան մը գործունէութեան, անոր տնօրէն, Պրն. Ճորճ Շիրինեանի գաղութը այցելութեան եւ այդ առթիւ կազմակերպուած հիւրասիրութիւն-ընդունելութեան:

Ըստ երեւոյթին, հապճէպ կազմակերպուած ձեռնարկ մըն էր, որուն հրաւիրուած էին մեր համայնքի ծանօթ դէմքեր, մտաւորականներ, լրագրողներ եւ Զօրեան հաստատութեան գործունէութեան ծանօթ անձնաւորութիւններ:

«Phoenicia» ճաշարանի համադամ ճաշերու ընկերակցութեամբ, գործադրուեցաւ հակիրճ եւ սակայն բովանդակալից յայտագիր մը:

Իրաւաբան վարդգէս Եղիայեան բացումը կատարեց յայտագրի, կարծ պատմական մը ընելով Զօրեան հաստատութեան եւ տալով օրուայ հիւր-բանախօսին կենսագրականը: Ապա բեմ եկաւ «CAR»-ի գործադիր տնօրէն, իրաւաբան Արթուր Չէրչեան, որ հակիրճ գծերով ներկայացուց իր ղեկավարած «CAR» հիմնարկի նպատակներն ու ցարդ տարած գործունէութիւնը:

Պրն. Չէրչեան ապա խօսքը ստաւ օրուայ բանախօսին, Զօրեան հաստատութեան տնօրէն Պրն. Շիրինեանին, որ շուրջ ժամ մը իր անգլերէն լեզուով գեկոյցին մէջ, առաւելաբար անդրադարձաւ իր ղեկավարած հաստատութեան, Զօրեան հետազոտական հաստատութեան տարբեր բնոյթի գործունէութեան, յատկապէս Հայկական Յեղասպանութեան եւ անոր նուիրուած բազմաթիւ լուրջ եւ քննական հետապնդումներուն: Իր ելոյթը երկու անգամ ընդմիջեց եւ բեմ հրաւիրեց Դոկտ. Էլիզ Սանասարեանը, «USC» համալսարանին եւ Պրն. Մարտիրոսեանը, մէկ ուրիշ ուսանող մը, որոնք կարճ ելոյթներ ունեցան իւրաքանչիւրը իր մաս-

նագիտութեան վերաբերեալ: Դոկտ. Էլիզ Սանասարեան յատկապէս անդրադարձաւ Յեղասպանութեան գործընթացին, եւ անոր մէջ կիրնեղութիւնը ուսած իւրաքանչիւր ճակատագրի մասին:

Պրն. Շիրինեան նաեւ անդրադարձաւ բարդատական Յեղասպանութեան խիստ կարեւոր նկարագրին մասին, որպէսզի կարելի ըլլայ հանգամանօրէն վերլուծել որեւէ Յեղասպանութեան արարք: Յուցադրութեան դրուած էին նաեւ բազմաթիւ գրքեր եւ տարբեր հրատարակութիւններ, բոլորն ալ Յեղասպանութեան քննարկման նուիրուած:

Ահիստ որ ճաշարանի մթնոլորտը շատ ձեռնտու չէր նման լուրջ ձեռնարկի համար, եւ սակայն հրաւիրեալները բաժնուեցան խիստ գոհ տրամադրութեամբ, մեծապէս գնահատելով իրաւաբան վարդգէս Եղիայեանի եւ իր հիմնած «CAR» հիմնարկի գործունէութիւնը:

Այդ երեկոյ մեզի գեկուցուեցաւ նոր գարգացումներու եւ նոր հեռանկարներու մասին, յատկապէս Յեղասպանութեան ճանաչման եւ մեր իրաւունքներու ձեռքբերման գծով: Լաւ կ'ըլլայ որ այս նոր հեռանկարները սեփականութիւնը դառնան մեր ժողովուրդի ղեկավար շրջանակներուն, որպէսզի, կարելի ըլլայ լուրջ եւ նպատակասլաց մօտեցում մը ցուցաբերել:

Կ'ուզենք շնորհակտել իրաւաբան վարդգէս Եղիայեանը եւ «CAR»-ը այս օգտակար նախաձեռնութեան համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ՆԵՐՍԷՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ ՀՈԳՇ. Տ. ԴԱՆԻԷԼ ՎՐԴ. ՖԸՆՏԸԳԵԱՆԻ ՀԵՏ

Արեւմտեան թեմի հաստատման 80-ամեակի տօնակատարութեանց ծիրէն ներս, ուր այս տարի յատուկ կերպով պիտի նշուի անցնող 80 տարիներու ընթացքին թեմի կատարած հոգեւոր, վարչական ու ծխական առաքելութիւնն ու ծառայութիւնը մեր ժողովուրդի գաւակներուն:

Այս առաքելութիւնն ու ծառայութիւնը, սակայն, կարելի չէ պատկերացնել, ամբողջացնել եւ իր նպատակին հասցնել առանց մարդ ուժի, այլ խօսքով՝ պատրաստուած այն երիտասարդին, որ յանձն կ'ուզէ առնել ծառայելու Աստուծոյ եւ հայ ժողովուրդին:

Այս իսկ նպատակով, յատուկ հրաւիրով Արեւմտեան թեմի Առաջնորդ՝ Գեղշ. Տ. Յովնան Արք. Տէր-տէրեանի, Երկուշաբթի, 9 Յուլիս, 2007, կ.է. ժամը 2:00-ին, Առաջնորդարան այցելեց Արեւելեան թեմէն ներս գործող Ս. Ներսէս Աստուածաբանական Ընծայարանի Հոգեւոր Տեսուչ՝ Հոգշ. Տ. Դանիէլ Վրդ. Ֆրնտրեանը: Այս հանդիպման ներկայ էին նաեւ՝ Արթ. Տ. Շնորհք Քհնյ. Տէմիրճեանը, Արթ. Տ. Սարգիս Քհնյ. Փեթրոյեանը, Ս. Ներսէս Ընծայարանին շրջանաւարտներ, Հայկ Մատոյեանը եւ Մաշտոց Չօպանեանը:

Հանդիպման նպատակն էր մօտէն ծանօթանալ եւ ծանօթացնել Արեւմտեան թեմի մեր հաւատացեալ ժողովուրդի գաւակներուն Ս.

Ներսէս Ընծայարանի առաքելութիւնն ու անոր անհրաժեշտութիւնը հեռաւոր սփիւռքի այս ափերուն:

Հանդիպումը սկսաւ Տէրունական աղօթքով եւ «Իմաստութիւն Հօր Յիսուս» մաղթանքով, որմէ ետք Սրբազան Հայրը բարի գալուստ մաղթեց Տեսուչ Հայր Սուրբին: Ան նաեւ լայնօրէն անդրադարձաւ Ս. Ներսէս Ընծայարանի առաքելութեան, անոր դերին ու կարեւորութեան, ու մանաւանդ Արեւմտեան թեմէն ներս Ս. Ներսէս Ընծայարանը ներկայութիւն դարձնելու տեսակետէ:

Սրբազան Հօր խօսքէն ետք, Հայր Դանիէլը լայնօրէն անդրադարձաւ Ս. Ներսէս Ընծայարանի պատմականին, անոր առաքելութեան, նպատակին, որ գրեթէ 50 տարիներէ ի վեր իբրեւ հաստատութիւն կը գործէ Ամերիկայի այս տարածքին, համագործակցութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեմարանին եւ այլ ձեմարաններու հետ, որուն գլխաւոր նպատակն է, սկսելով հիմնադիր՝ Երջանկալի շատակ՝ Տ. Տիրան Արք. Ներսոյեանէն, պատրաստել հոգեւոր եկեղեցականներ ծառայելու Աստուծոյ եւ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան գործնական երեւոյթներ Ս. Ներսէս Ընծայարանը աւելի ցայ-

Շարք էջ 19



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION


Բեղմնաւոր Անցեալ,
Լուսաշող Ապագայ:



Proud Past,
Exciting Future.

AGBU SOCIETY DINNER - OCTOBER 13, 2007
HUNTINGTON RITZ CARLTON HOTEL - PLEASE MARK YOUR CALENDARS

THE QUALITY AND SAFE CHOICE...



AGBU PASADENA HIGH SCHOOL
2007-2008 SCHOOL YEAR


NEW STUDENT ENROLLMENT GRADES 9-12

Experienced & Caring Faculty
College Preparatory Academic Programs


AGBU HIGH SCHOOL - PASADENA
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

For more information, campus tour
and a meeting with the administration
contact the school office at 626-794-0363

UNDER THE PATRONAGE OF
AGBU PRESIDENT BERGE SETRAKIAN



THE AGBU SOUTHERN CALIFORNIA
DISTRICT COMMITTEE PRESENTS



A TRIBUTE TO DR. ZAVEN MESSERLIAN

*In Recognition to His Services to the AGBU,
the Armenian Community and Church,
as a Dedicated Volunteer, Teacher, Historian & Author,
as well as His 40th Anniversary as
Principal of the Armenian Evangelical College, Beirut*

REMARKS - ARTISTIC PROGRAM - RECEPTION

FRIDAY, AUGUST 17, 2007, 8PM
Նոր Զուղայի խոճաները իրենց հետ Հոլանտա կը տանէին իրենց գաւակները՝ ուսանելու: Անոնցմէ ոմանք կը դառնային արհեստավարժ իւղանկարիչներ եւ վերադառնալով Նոր Զուղա՝ կը նկարէին իրենց եկեղեցիներուն որմնանկարները: Տարիներու ընթացքին Ամսթերտամի հայ գաղութը աճեցաւ եւ բարգաւաճեցաւ: Հոն է, որ կը հրատարակուէր առաջին հայ աստուածաշունչը, 1666ին: Ֆրանսացի ճամբորդ Թաւեռնիէ գրեց. «Այս մարդիկը (խոճաները) կարճ ժամանակի մը ընթացքին դարձան այնքան փորձառու, որ ամէն տեսակ առեւտուրի նախաձեռնեցին՝ հասնելով մինչեւ Թոնքին, Ճաւա եւ Ֆիլիպինեան կղզիներ»: Շարունակելով իր խօսքը՝ Թաւեռնիէ նշեց, թէ հայերը՝ «յարմարութիւն ունին վաճառականութեան, որովհետեւ անոնք խնայող են եւ ժուժկալ: Չեմ գիտեր ասիկա ազահուլութիւն է, թէ առաքինութիւն: Երբ անոնք, հայ խոճաները, երկար ճամբորդութիւններ ընեն, հետերնին կը տանին կարգ մը չոր ուտելիքներ: Եթէ լեռնային շրջաններու մէջ հանդիպին աժան ուլիկի մը կամ գառնուկի մը, կը գնեն: Անոնք միշտ կարթ կ'ունենան՝ գետակներէ անցած ատեն ձուկ որսալու համար: Երբ գիւղաքաղաք կը հասնին, պարապ սենեակ մը կը վարձեն եւ հինգ կամ վեց հոգի նոյն սենեակին մէջ կը քնանան՝ իւրաքանչիւրը իրեն հետ տարած ըլլալով իր մահիճը, վերմակը եւ խո-

ԽՈՒՇԵՐ

ԺՈՂՈՎ ԼԵՈՒՆ ՎՐԱՅ (ՅՈՒՇԵՐ ՍՕՏ ԱՆՅԵԱԼԻՑ)

Ռ. ԿՈՐԻԻՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում պոռնոլոգ Հայաստանը 250-300 հազար հոգի իր լաւագոյն զաւակները զոհ տուեց ի պաշտպանութիւն խորհրդային Միութեան ընդդէմ գերմանական ֆաշիստին, գերագանցող թիւ խորհրդային միութեան միւս հանրապետութիւնների նկատմամբ թուաքանակի տոկոսային հաշուով, այդու Հայաստանի բնակչութեան թիւը մեծապէս պակսել էր, որի հետեւանքով թոյլատրուեց Հայաստանի բնակչութեանը օժտել նորերով, այսինքն՝ ներգաղթ կազմակերպելով:

1945 թ.-ին ներգաղթի նպատակով գաւառներից Թեհրան գաղթած հայութեան մէկ մասին չլաւ շողուեց հայրենադարձուել, տարբեր պատճառներով ներգաղթը կանգ առւաւ, մեծ թուով հայեր իրենց տուն ու տեղը ձեռքից տուած մատուցելին դժուարութիւնների բնակարանի եւ գոյապրուստի տեսակէտից, որոնց, այդ ծանր օրերին, օգտակար հանդիսացան բարեսիրական կազմակերպութիւններ եւ բարեհոգի ունեւոր հայեր:

Թեհրանի կենտրոնին կից հիւսիսային տեղատարած քում հիմքը դրուեց Բեհշաբադ թաղամաս անունով, ուր տեղաւորուեցին չհայրենադարձուած, գիւղերից տնաքանդ դարձած, տնագուրկ բազմաթիւ հայ ընտանիքներ իրենց ձեռքերով կառուցած խրճիթներում: Նա իր ոլորմոլոր փողոցներով ու խրճիթանման անհրապոյր համապատկերով գրաւում էր կարեւոր տարածութիւն, որը բարի աչքով չէր դիտուում պետական պատասխանատու անձանց կողմից, որի հետեւանքով տարբեր պիտակներով վարկաբեկում էին հայերին այդ տեղից ցրելու համար:

1950-54 թ.-ին Բեհշաբադի բնակչութիւնը դուրս հանուեց եւ թաղամասը հիմնադրուեց հայաստանցի հայրենադարձները: Դարձեալ տնաքանդութիւն եւ ապրուստի դժուարին կեանք:

Նոր թաղամասեր կազմուեցին Թեհրանի հիւսիս-արեւելեան կողմերում՝ Նարմաք, Մաջիդիէ, Չարքէշ եւ Վահիդիէ անուններով, աստիճանաբար Թեհրանահայութեան մեծ մասը կենտրոնացաւ այս թաղամասերում, որոնք գոյատեւում են մինչեւ այսօր իրենց հայապահպանման օջախներով՝ դպրոցներ, եկեղեցիներ, միութիւններ եւ այլն: Սակայն այս թաղամասերի եւ ընդհանուր առմամբ իրանահայութեան թիւը նուազում է իրանի իսլամական վարչակարգի հաստատման տարիներից ի վեր արեւմտեան երկրները գաղթելով, ցաւօք քիչ թուով հայեր են գաղթում Հայաստան նկատի առնելով Հայաստանի տնտեսական անմխիթար վիճակը:

Առաջին մեծ ներգաղթից 15 տարի յետոյ դարձեալ ներգաղթ կազմակերպուեց՝ 1960-73 թ.-ին, այս անգամ ծրագրուած:

Իրանահայը հայրենակարօտից մղուած դիմում էր խորհրդային Միութեան Հայաստանի բաժնի ներկայացուցչութեան (կցորդին) հայրենադարձելու նպատակով: Այդ տարիներին՝ հայրենադարձութիւնը նկատուում էր բախտաւորութիւն: Հաստ ու կենտ մնացած գաւառներից եւ Թեհրան քաղաքի շրջաններից օր ու գիշեր, նոյնիսկ ձմռան սառնամանիք օրերին, խոնուում էին դեսպանութեան առջեւը հայրենիք մեկնելու համար: Յրտից պաշտպանուե-

լու համար կրակ էին վառում, ժամեր ու ժամեր սպասում էին հերթագրուելու եւ արձանագրուելու կամ իրենց փաստաթղթերը յանձնելու դեսպանութեան: Շատեր թողած իրենց աշխատանքը հայրենադարձութեան գործին էին լծուած, պատահում էր վէճ ու տուրուտմիոց հերթականութեան վրայ եւ ոստիկանութեան միջամտութիւն:

Ինչ ոգեւորութիւն էր տիրում դիմորդների մէջ, խնդրում էին, աղաչում էին ծածուկ մաղարիչներ էր միջնորդների միջոցով փոխանցուում, որ իրենց շուտ ճամբայ դնեն հայրենիք: Հայաստանի դեսպանութեան կցորդներից չիշենք մի քանիսը, ինչպէս՝ Յովհաննիսեան, Ղուկասեան, Մելիքեան, Յովսէփեան:

Պրոլետարիայի կարգերը իրանահայ բանուորութեան եւ գիւղացիութեան մէջ խանդավառութիւն էր առաջացրել ի մասնաւորի Գաւառներից Թեհրան գաղթած ընտանիքների մէջ, որոնք տակաւին ապրում էին գոյապրուստի փնտտուքի մէջ: Շատ-շատերը աշխատանքի եւ բնակարանի դժուարութիւններ ունէին ու վարձուորներ էին, նրանք իրենց աւօրեայ ապրուստը ապահովելու համար ընդգրկուած էին ծառայութեանց մէջ: Նրանք լսել էին, որ այնտեղ ձրի բնակարան են յանձնում, երեխաներին պարտադիր ուսման են տանում եւ աշխատանք տալիս, նրանց մօտ համոզմունք էր դարձել, որ արդար ու երջանիկ կեանքը գտնուում է կոմիսիատական աշխարհում, ուր բոլորը հաւասար մակարդակով ազատ կեանք են ապրում: Սակայն առաւելաբար հայրենիքի սէրն ու կարօտն էր, որ նրանց մղում էր դէպի հայրենիք, աստանդակային կեանքից ձերբազատուելու եւ տեւական կայք հաստատելու հայրենի հողի վրայ:

Մեզ ծանօթ Անդրանիկն էլ մէկն էր, որ յետամուտ էր հայրենադարձելու աշխատանքներին: Նա Սուլթանաբադ գաւառից 1950-ական թուականներին ծնողի, երեք եղբայր ու երկու քրոջ հետ փոխադրուել էր Թեհրան եւ հաստատուել էր Վահիէ թաղամասում վարձու բնակարանում, ութը շունչ միասին մէկ բնակարանում ապրելով: Նրանք իրենց ունեցած հաշմը, բնակարանը, արտերն ու պարտէզը՝ չորս հարիւր տարիների պապենական փոխն ի փոխ ժառանգութիւն-հարստութիւնը պարսիկ գիւղացիներին արժան գնով վաճառած, իրենց կապը գիւղից կտրած դարձել էին քաղաքաբնակ գիւղական սովորութիւններով, ժամանակը անվարան ընտելացնելու էր նրանց քաղաքային կեանքի ապրելակերպին:

Այն օրերին Անդրանիկը տասնեօթ տարեկան էր, տան մեծ գաւակը, բոլոր տնեցիների յոյսը դրուած էր նրա վրայ: Պէտք էր որեւէ գնով աշխատանքի անցնել ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար:

Անդրանիկը գիւղական վարժարանի կրթութիւն ունէր, տնեցիները նրա ուսման սեւ ու սպիտակը ճանաչած լինելով բաւարար նկատեցին եւ իրեն մղեցին որեւէ արհեստ սովորելու: Այն օրերի մեր գիւղացի ընտանիքների շատ-շատերի մտայնութիւնը այս էր, տեսողութեան հորիզոնը սահմանափակ, որ իրենց գաւակը մի արհեստ սովորի իր ապագայ կեանքը տնօրինելու համար: Մօտիկ ծանօթներից Մանաւազը, որ կօշկակարի արհեստանոց ունէր, նրան որպէս աշկերտ ընդունում է իր մօտ: Անդրանիկի

ամենափոքր եղբայրը՝ Գարեգինը, երկու քրորերի՝ Սաթենիկի եւ Արեգ-Նազանի հետ միասին ընդունուեցին որպէս դպրոցական աշակերտ «Նալի-րի» դպրոցում, իսկ միւս երկու եղբայրները՝ Բաբգէնը եւ Վազգէնը նոյնպէս արհեստ սովորելու դիմեցին, Բաբգէնը՝ տեխնիկ մեքենաշինութեան, իսկ Վազգէնը՝ երկաթագործի:

Անդրանիկը գոհ եւ ուրախ էր գործից, նա իր ուշիմութեան եւ աշխատասիրութեան շնորհիւ կարճ ժամանակում դառնում է կանացի եւ սղամարդու վարպետ կօշկակար շահելով տիրոջ՝ Մանաւազի, համակրանքը եւ վստահութիւնը: Այդ ժամանակներում կօշկակարութիւնը յարգի արհեստ էր նկատուում, երիտասարդները ներգրաւուում էին նրանում, քանի որ պահանջարկը բարձր էր եւ եկամուտը գոհացուցիչ: Այն տարիներին դեռ կօշկակարութիւնը՝ կօշիկ կապելը, մեքենաշինարտ էր եւ կատարուում էր ձեռքով:

Անդրանիկն իր շրջապատում ծանօթանում է հայրենասէր գործիչների հետ եւ նրանց հետ յարաբերուում, դասախօսութիւնների եւ ժողովների մասնակցում, մշակութային եւ կազմակերպչական գործերում օգտակար մէկն է հանդիսանում:

Նա իր համեստ ու ընդհանր բնավորութեամբ յաջողում է իր համատարիք գործակիցներից, որոնք տարբեր գաւառներից էին, մի խմբակ կազմել: Նրանք թուով հինգ ընկերներ էին՝ Արսէնը, Հայկը, Արամայիսը, Արմէնը եւ ինքը:

Անդրանիկն իր խմբակի ընկերներին որոշ ժողովներին եւ հանդիպումներին մասնակից էր դարձնում եւ նրանց մտքերը զարգացնելու նպատակով ընթացանութեան համար գրքեր էր առաջարկում եւ քաջալերում էր հայերէն ու պարսկերէն թերթեր կարդալ:

Հինգ հայեր, հինգ սրտակիցներ, հինգ գաղափարակիցներ:

Հինգ տարբեր թաղերից իրար շուրջ հաւաքուած հայեր:

Նրանք առնուազն շաբաթը մի անգամ իրար շուրջ էին հաւաքուում խօսելով երկրի քաղաքական դաշտի եւ հայկական կեանքը յուզող ինդիր-

ների շուրջ: Այդ տարիներին հայրենադարձութիւնը համայնքի կարեւոր հարցերից էր:

Ահա այդ ուղղութեամբ աշխատանքներ էր տարուում:

Այդ փոքրիկ խմբակի ուղեղն ու դեղը Անդրանիկն էր, որուն ընկերները կոչում էին՝ «խմբի շարժիչ ուղեղ»-ը:

«Տղե՛րք, հինգ շաբաթի գիշեր կը պատրաստուէք առաւօտը շուտ գնանք սար, էնտեղ կարեւոր բան ունենմ ասելու:

Ով էր որ սիրով չառաջադրէր նրան:

Գեղածիծաղ մալիսեան ուրբաթ օր, արձակուրդի օր, առաւօտուայ լուսնուծութիւն հինգ ընկերներ ուսապարկերը թիկունքին Շեմրանի սարի ստորոտից դէպի վեր գազաթն են բարձրանում:

Լեռնագնացութիւնը անծանօթ մարզանք էր իրենց համար, Շեմրանի սարը նախապէս բարձրացել եւ ծանօթ էին նրան:

Շեմրանի սարը ամբողջութեամբ եզերում է Թեհրանի հիւսիսը, դա հէնց նոյն Ալբորգեան լեռնաշղթայի շարունակութիւնն է, որի նշանաւոր գագաթն է Դամաւանդը իր 5865 մետր բարձրութեամբ, դրա գագաթներից են նաեւ՝ Թոհայը, Փալանգ Չայը, Սփիդ Բամարը, Շերւինը, Գուլաք Չայը եւ այլն: Լեռնաշղթան նմանում է ուղտերի շարանի, որոնք մետաքսի ճամբով արեւելքից արեւմուտք են գնում բեռները սապատներին բարձած:

Լեռնաշղթան հարուստ է աղբիւրներով եւ հոսող վարար գետերով, որոնք գոյանում են ձմռան սառնամանիքին առատ ձիւնի տեղանքից խմելու ջրով եւ ելեկտրականութիւն հայթայթելով հսկայ Թեհրանի եւ շրջանների բնակչութեանց համար:

Գարնանային եղանակ էր, սակայն բարձունքներում սառը քամին փչում էր անսանձ, այս կողմերում մինչեւ գարնան վերջերը գիշերուայ ընթացքում խստաշունչ կծող ցուրտ է, գագաթներին ձիւնը նստած,

Մար.ք էջ 17

ՀԱՆՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
Վ Ի Գ Ա Կ Ա Յ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն
Ի նպաստ
Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին
Մեծ Պարգել՝ 2008 Lexus ES 350
Ա. Պարգել՝ Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան
Բ. Պարգել՝ Laptop Համակարգիչ
Գ. Պարգել՝ 42" Plasma TV
Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. Ժամը 8:00իս Verdugo Hills Country Club
400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202
Նոր Հաճըն Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով
Նուէր՝ \$100
Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029

ՇՐԱՅՐ ՏԵՕՔՍԷՃԵԱՆ ՓՐՕՖԵՍՈՒՐԸ

ՎԱՐԴԱՆ Ա.Ի. ՔԶՆՅ. ՏԻԻԼ ԿԷՐԵԱՆ

Վերոգրեալ տիրոջ ստեղծած, հայ եւ օտար հասարակաց զգացումէն բարացուցուած՝ երեւելի դաստիարակը, պատուաբեր ներկայութիւն մըն է հայութեան մէջ, իր բարեշնորհ Սարկաւազի, շարականագէտ դպրապետի եւ կրթական մշակի մակդիրներով:



Վաղուց կէս դարը իր ետեւ թողած, վաթսուհի եւ եօթանասունի միջեւ տարուբերող տարիքը, հակառակ իր իմացական եւ ֆիզիքական ուժերու սպառումին, չենք նկատեր իր տրամադրութիւններուն մէջ յոգնութեան նուազագոյն ճնշումը, այլ՝ տարիներու յաւելումով կը դառնայ աւելի կենսառողջ իր եռանդուն եւ արդիւնալից գործունէութեամբ:

Իր ամենօրեայ պարտականութիւններուն յայտագիրը, այնքան խճողուած է, որ օրուան ժամերը արագօրէն կը սահին իր կեանքէն, առանց ըստէ մը կորուստ արձանագրելու:

Անկասելի վազք մըն է եւ ազնիւ պաշար մը իր ամբողջ կեանքը: Կ'արհամարհէ յոգնութիւնը, որքան ալ ծանրակշիռ ըլլայ ճնշումը, իր ժամանակին եւ մարմնոյն վրայ:

Չեմ հաւատար, որ այլազան պարտականութիւններով ծանրաբեռնուած՝ աշխատանքի այս քաջակորով հերոսը, այսօրուան գործը վաղուան թողու: Լաւ կը հասկնայ, որ յետաձգուած պարտականութիւն մը, հիւանդութեան նման վարակիչ է, ոչ վաղը կը կատարուի, ոչ յաջորդ օրը, ոչ ալ յառաջիկային:

Հակառակ, որ իր կեանքին կէսէն աւելին ապրած է եւ շատեր սկսած են նուազեցնել աշխատանքի ժամերը եւ օրերը: Ան կը շարունակէ անցեալի աւելնով խճողել իր առօրեայ յայտագիրը, այլազան պարտականութիւններով:

Ջանասէր մարդուն համար, ոչ ժամանակը կը պակսի եւ ոչ գործելու եռանդը, երբ ժամանակին պահանջները կը ստիպեն, դադար չտալ մարմնոյն շարժումներուն, նոր նպատակներ իրագործելու:

Կրթական գործին մէջ, ամենէն հիմնական եւ յիշատակելի գբադումները կը կազմեն դաստիարակի մը համար, իր հանապազօրեայ շփումները ուսանողութեան հետ:

* * *

Յաճախ կը գրեն ու կը զանգատին, թէ ժողովուրդը չի գնահատեր իր վաստակաւորներուն հանրանուէր ծառայութիւնները եւ արդիւնալից գործունէութիւնը: Մասամբ՝ ճշմարիտ է այս անտեսումը, որ այսօր ալ, հին սովորութեամբ կը շարունակուի շեշտուած կերպով՝ համանոյն արհամարհանքը ցուցադրուել իրաւ մտաւորականին եւ արուեստագէտին նկատմամբ:

Պարտաւոր ենք սակայն խոստովանիլ, որ հասարակաց երախտագիտութեան արժանաւորը միշտ ալ անվարձահատոց չէ թողուած, շատեր՝ ալեւորութեան հանգրուանին հասած, ընդունած են իրենց արդար հատուցումը եւ ոմանք ալ՝ իրենց մահէն ետք, փառահեղ հան-

դիսութիւններով գնահատուած են ըստ արժանւոյն:

Փրօֆէսօսէրը, որուն մասին կը գրուին այս գնահատելի տողերը, հանրաճանաչ դէմք մըն է հայ եւ օտար հասարակութիւններէ, որպէս յայտնի մտաւորական եւ դասախօս, իր բեղուն վաստակով եւ ազգօգուտ ծառայութիւններով:

Պէտք է ըսել, թէ հայ եւ անգլիագիր թերթերու մէջ, հեղինակաւոր գրիչներ կրթական մարզի մէջ, մեծապէս դրուատուած են իր ուսուցչական եւ գրական ձիրքերը:

Հատորի ծաւալով լոյս տեսած իր գիրքերը եւ բազմաթիւ յօդուածները, գիտուն մտքի արտադրութիւններ են, անգլերէնով լոյս տեսած:

Հայ անգլիախօս հայերու ու շաղրութեան չեն վրիպած այդ բարձրարժէք հրատարակութիւնները, որոնք ազգային ու համամարդկային նիւթեր են, հեղինակին գրական որակը արժեւորող:

Դժբախտաբար, անգլերէն լեզուի իմ անբաւարար ծանօթութիւնս, այդ գիրքերու եւ յօդուածներու պարունակութեան անգէտ պահած են զիս:

Այսօր, տարբեր են մարդիկ իրենց մտայնութիւններով եւ բոլորովին տարբեր է ժամանակը իր պահանջներով ու պայմաններով:

Հայ գրականութիւնը բարոյալքուած վիճակ մը կը ներկայացնէ, հայ մտաւորականին ու արուեստագէտին անձը ու վաստակը չեն յարգուիր, հայերէն թերթերը վաճառատուներու մէջ ձրի կը տրուին յաճախողներուն, հայերէն գիրքերը գրատուներու փոշիացած դարակներու վրայ, կ'աւաղեն իրենց յուսալքուած վիճակը: Իրաւունք ունի ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ թերթին խմբագիրը ամպիոնին բարձունքէն յայտարարելու իր ցաւը, հետեւեալ սրամիտ խօսքերով:

- Ժամանակը հեռու չէ, որ հայ ընթերցողներուն դրամ պիտի տանք, որ հայերէն թերթ կարդան:

Նիւթապաշտութիւնը եւ մարմ-

նապաշտութիւնը նեղ լուսանցք մը անգամ չեն թողած, որ հաճոյապաշտ մարդիկ, նիւթէն գերազանց՝ բնագանցական ճշմարտութիւններու վրայ, ըստէ մը լրջօրէն մտածեն:

Ներկայիս, փոքրաթիւ որակաւոր քիչերով՝ շիտակ ուղղութիւն կը տրուի հայ ժողովուրդի տարաբախտ կեանքին ու ճակատագրին:

Ես կը հաւատամ, որ ոչ մէկ ժամանակ հայութեան կեանքէն պիտի չպակսին Փրօֆ, Հրայր Տէօքմէճեանի կերպարով հայրենասէրներ, որ հայ սերունդներու դաստիարակութեան համար չզոհեն ու չզոհուին իրենց անձնդիր գոհաբերութիւններով:

Եթէ ըսեմ, թէ այս պարզ ու խոնարհ մարդը հասարակութեան մէջ, ամենէն բազմաշխատ մարդոց մէջ մէկն է եւ ըստէ մը ժամանակ չի գտներ իր ինքնութեան վրայ մտածելու, չափազանցած չեմ ըլլար:

Երեք սրբատեղիներ, տուն, եկեղեցի, դպրոց, իր ամենօրեայ միակ յաճախավայրերն են, որոնք անյետաձգելի պարտականութիւններով կը սպառեն իր օրուան յայտագիրը:

Ճշգրտագնութիւնը, պատասխանատուութիւնը, նուիրուածութիւնը, իր ետեւ թողած շուքին պէս, հաւատարմօրէն կը հետեւին իր ծրագրային աշխատանքներուն:

Իր բոլոր բաղձանքները եւ նպատակները կը թուին հիւսուած ըլլալ համեստութեան եւ պարզութեան շողերով:

Այս բարացուցական գրաւիչ յատկանիշներով ճառագայթող ուսուցիչը, գրեթէ ամէն կազմակերպութեան մէջ, իրեն պատեհութիւն կը տրուի ամպիոններու բարձունքէն ելոյթներ ունենալու:

Դարամերձ տարիքիս գրեցի այս յօդուածը իր անբասիր կեանքին ու վաստակին մասին սրտիս ամբողջ եռանդով, առանց ճշմարտութեանէն

Շարք էջ 19

The Quality and Safe Choice...

AGBU HIGH SCHOOL -PASADENA

2007-2008 School Year

New Student Enrollment

Grades: 9-12

*Experienced and Caring Faculty
College Preparatory Academic Program
Honors & AP Level Instruction*

For further information, campus tour and a meeting with the
administration, please call for an appointment

(626) 794 – 0363 ❖ (818) 612-1079

2495 E. Mountain Street (corner of Altadena Street), Pasadena, CA 91104

ՍԵՐՈԺԻ ԵՐԱԶԸ

ՊԵՏՐՈՍՆԱՃԱՐԵԱՆ

Երեւան քաղաքում մի լաւ ընկեր ունէի Ստեփան անունով, ուսող խմող, աշխատասէր մարդ էր, ունէր երեխաներ եւ կին, շատ համեստ ընտանիք էին: Մի օր ինձ պատմեց իր հարեւան Սերոժի մահուան մասին: Որպէս հարեւան գնացել էր չուղարկաւորութեան մասնակցելու, դազաղը տեղադրել էին մեծ թիթենի ծառի շուքում, չորս կողմը սեղան, որոնք զարդարուած էին գեղեցիկ փուռներով, ուտելիքը շատ առատ էր, գինին եւ օղին անսահման: Այս բոլորը նրա համար էր որ մեր Սերոժը «լաւ» տղաներից էր: Երբ հերթը եկաւ դազաղի կափարիչը փակելու, յայտարարեցին ովքեր ուզում են Սերոժին վերջին հրաժեշտը տալու, կարող են մօտենալ դազաղին եւ իրենց խօսքը ասել հանգուցեալ Սերոժի մասին: Ես էլ իմ հերթին որպէս հարեւան մօտեցայ երկու խօսք ասելու: Ինչ տեսնեմ, մեռած Սերոժի դազաղի կողքերը երկու շիշ կոնեակ են դրել եւ մեծ կտոր թղթով փաթաթուած խորոված:

Երբ խօսքս ավարտեցի, դազաղի մօտից ուզեցի հեռանալ տեսաչ ետեւից ուրիշ մարդիկ են գալիս եւ այսպէս գնացի նախկին տեղս, պատի մօտ նստեցի: Կողքիս նստողին հարցրեցի թէ այս խորովածը եւ երկու շիշ կոնեակները ինչու համար են դրել դազաղին մէջ: Գիտես Ստեփան ասաց, այդ գիտուն մարդը, կոնեակը տանում է երկինք, որ այնտեղ պէտք է գալու, քանի որ Սերոժի պահանջը այդպէս է եղել: Այդպէս էլ կոնեակի շիշերը եւ խորովածը մնացին դա-

զաղին մէջ եւ տարան գերեզմանատուն:

Գերեզմանատանը Սերոժի համար յարմար տեղ չկար (կենտրոնական հրապարակի մօտակայքում) եւ ուսամբարձ դազաղը տարան գերեզմանատան ծայրամասում թաղեցին:

Հիմա անցնենք Սերոժին, երկնքում անցած երկար ճանապարհի մասին թէ ինչպէս տեղ հասաւ: Երբ Սերոժին երկնքում դիմաւորեցին՝ հարցում պատասխանից յետոյ որակաւորեցին որպէս (գողական տղայ) արտօնեցին որպէսզի ներկայանայ Աստուծոյ մօտ եւ ոչ թէ Սատանայի: Աստուած պապան տեսաւ Սերոժին, հարցրեց ինքնակենսագրութիւնը, պատմելու ժամանակ կամաց մը Հայկական ընտիր կոնեակը դրեց սեղանի վրայ խորովածի հետ միասին: Աստուած պապան զարմացաւ, թէ սա ինչ բան է, ոչ ոք նման չտրհք չի ունեցել, հայկական կոնեակը խորովածը ոչխարի չալաղաջով պատրաստուած: Աստուած պապան առաջին բաժակը ձեռքով լցնում է եւ խմում է, երկրորդ բաժակը Սերոժին է լցնում քանի որ փորձառութիւն ունի եւ Աստուած պապան Սերոժին արտօնութիւն է տալիս ամբողջ դրախտի մէջ վայելելու իրաւունքը: Մի քանի օր դրախտի մէջ ման գալով նկատում է բաւական հեռու մի դղեակ է երեւում: Մեր Սերոժն զարմանում է այդ դղեակն թէ ինչ բան է: Առաւօտ կանուխ դուրս է գալիս քայլելով համում է դղեակին, տեսնում է մի գեղեցիկ պալատ: Ուզում է ներս մտնի, դրան զանգը տալիս է, ներսից իսկոյն դուրս է

գալիս մի սեւական, բաւական իրար հետ խօսելուց յետոյ, հարցնում է Սերոժին թէ ինչ ես ուզում, պատասխանում է որ ես արտօնագիր ունեմ Աստուծոյ կողմից որ ամբողջ դրախտը պատելու, սեւականը ասում է, այստեղ միայն Աստուած պապան մտնելու իրաւունք ունի ուրիշ ոչ մէկը, դա Աստուծոյ հրամանն է, ես քեզ չեմ կարող ներս առնել: Սերոժը տեսնում է սեւականը շատ խիստ մարդ է, հանում է հայկական ընտիր կոնեակի շրջ շիշը տալիս է սեւականին: Սեւականը տեսնելով հայկական ընտիր կոնեակը իսկոյն յիշում է որ այս կոնեակից են խմել Ուրիշներն Ջրջըլը եւ Ստալինը, ուրախ ուրախ վերցնում է շիշը եւ դուռը բաց է անում:

Մեր Սերոժն ներս է մտնում սեւականի հետ, նայելով աջ ձախ կողմերը, որը կեանքում նման բան երբեք չի տեսել, անցնում է յաջորդ սենեակը եւ ինչ տեսնի, մի մեծ հայելի, զարմանում է Սերոժն մեծ հայելին տեսնելով: Սեւականը բացատրում է, որ Աստուած պապան այս հայելիով է նայում աշխարհի վրայ եւ հրամանները տալիս: Սեւականը հայելին պտտացնում է մի քանի քաղաքներ, Մոսկուա, Լոնտոն, Հռոմ, Յունաստան եւ այլ քաղաքներ: Սեւականը տեսնում է որ Սերոժը շատ հետաքրքիր մօտենում է հայելուն մի պահ գործով անցնում է յաջորդ սենեակը, օգտ-

ուելով սեւականի բացակայութիւնից եւ միացնում է Հայաստան, տեսնում է մեր նախագահ Քոչարեանին, Սերժ Սարգսեանին, փողոցները, տները, ցանկութիւն է առաջ գալիս մեր Սերոժին տեսնի սեփական տունը երեխաներին, ծնողներին, գեղեցիկ հիւան շատ է ման գալիս կնկան չի գտնում: Երեխաներին հարցնում է թէ ձեր մայրը որտեղ է գնացել, փոքրիկ Երագիկը պատասխանում է մամաս թուրքիա Ստամպուլ է գնացել:

Սերոժն անմիջապէս շրջում է հայելին Ստամպուլ տեսնում է Ֆոսֆորի նեղուցը, Մարմարա ծովը եւ գտնում է գեղեցիկ կնոջը, հենց այն ըրպէին որ կինը մերկ վիճակում պառկած է Ջաղֆարի մահճակալի մէջ, եւ ահա Ջաղֆարը պատրաստում է ֆիզիքական սեռային գործի, Սերոժն գայրացած յետագայ անսպասելի գործից եւ իր գեղեցիկ կնոջը ազատի ահռելի Ջաղֆարի ձեռքից, ձեռքերը վեր բարձրացնելով հարուածելու Ջաղֆարին եւ կնոջը, սակայն ափսոս որ հարուածը ընկնում է մեծ հայելու վրայ եւ կտոր կտոր փշրուելով թափուում է յատակին:

Եզրակացնում
Ահա այդ պատճառով է որ Աստուած պապան չի կարող տեսնել թէ ինչ վիճակի մէջ է մեր Հայրենիքը՝ Հայաստանը, սպասենք մինչեւ նոր հայելի դուրի:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863
 Email: massis2@earthlink.net

Japanese Food
RESTAURANT
LEGENDARY JAPANESE FOOD

CATERING FOR ALL OCCASION

INTERNATIONAL MARKET HALL
 11111
 11111 - 11111
 11111

CALL FOR RESERVATION

BELLY-DANCING

ԺՈՂՈՎ ԼԵՈՒՆ ԿՐԱՅ

Շարունակուած էջ 14-Էճ

միայն արեւը ծագելուն հետ օդը որոշ չափով տաքանում է: Դեռ արեւը յամենում էր մնալ հորիզոնից ցած, ոչ ցոլքն էր երեւում եւ ոչ էլ գունդը, միայն գնալով երկնակամարը կաթնագոյն էր դառնում:

Հինգ ղօշաղ (կտրիճ) երիտասարդներ տաքուկ հագնուած, սպորտակոշիկներով, գաւազանը ձեռքերին, համաչափ քայլերով, իրենց առջեւ ունենալով Անդրանիկին քայլում են արահետներով սարն ի վեր:

Փոքրիկ ջոկատը լուռ ու խոհուն, զգոյշ իրենց քայլերին գաւազանները օգնութեամբ, շղթայի օղակների նման մէկը միւսին հետեւելով՝ վիթխարի լեռան գանգուածի գառնիվերն էին բարձրանում հանդարտ ու խաղաղ:

-Ախպրտի՛ք ջան, մէկ ականջ արէք ինձ:

Անդրանիկն էր տղաների առջեւ բարձրին կանգնած, գաւազանին յենուած, բամբ որոտան ձայնով խօսքը ջերմօրէն ուղղած ընկերներին:

-Ինչպէս ասել եմ ձեզ, էսօր կարեւոր հարցի համար եմ ձեզ բերել էստեղ, դրա մասին կը խօսեմ, երբ շուրջ բոլոր նախաճաշի նստեցիւնք, դէ՛հ, տղերք ջան, շարունակենք մեր ճամբան մինչեւ արեւը լաւ բացուի, իր կենսատու ճառագայթները փոխ բոլորիս վրայ եւ օդը տաքանայ:

Բոլոր տղաները ընկան մտածողութեան մէջ, բայց որեւէ ակնարկ խօսք չեղաւ եւ սկսեցին լուռ քայլել սպասողական վիճակում մինչեւ նախաճաշի հրաման տրուի: Նրանք լուռ կեցուածքով իրենց լսողութիւնն էին ցոյց տալիս իրենց սիրելի ղեկավար ընկերոջը:

Արդէն իսկ բարեբեր արեւի ոսկեհոտը շողերը արեւելքից դէպի կամարն էին տարածուել երկնքի, սակայն հրագունդը լուսաբեր դեռ մնում էր բարձրաբերձ Դամասկոսի կատարի ետեւը:

Հէ՛ջ, ինչ գեղեցիկ է վաղնջական առաւօտուն բարձունքից տեսնել հրաշափառ ծագումը արփիի, նոյնքան զմայլելի տեսարան մայրամուտը արեգակի:

Մեր լեռնագնացների շարժումները հնչում էին ներդաշնակ, ինչպէս՝ ոգով ու շնչով, նոյնպէս՝ սրտի բաբախումով, գաւազանների զարկերով եւ քայլերին համահունչ: Նրանք հեռուից դիտողի աչքին ճգնաւորի էին նմանում, որ կլանուած են խորախորհուրդ նպատակներով:

Արեւն իր ամբողջ էութեամբ դուրս էր ցցել իր հրեղէն գլուխը եւ յամբօրէն առաջանում էր, արեւի գալուն պէս հեռանում էին երկնքում քուլայ-քուլայ երեւացող ամպակոյտերը: Երկինքը հետզհետէ դառնում էր միակտուր լաջուարդատեսք՝ ջինջ ու անամպ:

-Ախպրտի՛ք ջան, Արսէ՛ն, Հա՛յկ, Արամայի՛ս եւ Արմէ՛ն, յարմար էք տեսնո՞ւմ՝ այս քարաժայռի ներքեւում հեռու քամիներից նախաճաշենք: Անդրանիկն էր առաջարկողը:

Տղաների շարժումներից երեւաց, որ թէ՛ յոգնել են եւ թէ՛ քաղցած:

-Այո՛, համաձայնութիւն յայտնեցին տղաները, ապահով տեղ եւ դիտարան, որտեղից լաւագոյն տեսնուում է Թեհրան քաղաքը իր համապատկերով, ուր 3-3.5 միլիոն բնակչութիւն է ապրում առօրեայ կեանքի մտահոգութիւններով,

ձգտումներով եւ ոգորումներով, արեւելեան ժողովուրդ՝ Աստուածավախ, հիւրասէր, բարեգութ եւ բարեխիղճ հոգեբանութեամբ:

Հարթ քարէ կտորներից պատրաստուած է ափուց, որի վրայ դրուում է նախաճաշը: Մեր տղաները բոլոր կազմած, քարերի վրայ նստած վայելում են բոլորի կողմից պատրաստուած նախաճաշը, ինչ հաճոյքով, ինչ ախորժակով, այդ էլ Ալբորգեան լեռնաշղթայի մէկ հատուածի վրայ, խաժ երկնակամարի արեգակի ոսկեհոտը շողերի տակ, շուրջբոլորը ժայռեր ու ժայռեր:

Լի առնականութեամբ հինգ երիտասարդներ գիւղական արդար կեանքում ծնուած ու մեծացած մէկ-մէկ նմանում էին մեր այն Ջան Ֆեղայիներին, որոնց կեանքը անցնում էր լեռներում պաշտպանելով հայ գիւղացու պատիւն ու կեանքը:

-Ախպրտի՛ք ջան, ժամն է եկել, մէկ ակն խնդրե՛ք ղեկը մեր ներկայ հայ կեանքի կարեւոր իրադարձութեան մասին խօսենք, առաջարկներ տանք, մտքեր փոխանակենք եւ որոշումներ անենք: Այսօրուայ խօսակցութեան եւ ժողովի համար լեռն եմ ընտրել այն նպատակով, որ այս լեռը մեր յետագայ կեանքի խորհրդանիշը պիտի դառնայ:

Անդրանիկն իր հայեացքը մէկ-մէկ տղաների դէմքերին ուղղելով խօսում էր լուրջ եւ կենսորոնացած իր ասելիքի վրայ, նա լեռը իրենց ապագայ գործունէութեան որպէս խորհրդանիշ ակնարկեց: Ճիշտ է, որ լեռը քարեղէն գանգուած է, սակայն նա շատ խորհուրդներ է պարունակում իր մէջ, ուսանելի խորիմաստ մտքեր:

Ճգնաւորները իրենց ժուժկալ կեանքով մեկուսանում էին լեռներում, իրենց մարմինը չարչարանքի էին ենթարկում, որպէսզի ինքնամաքման եւ հոգու բերեղացման ճամբով արժանի դառնան Աստու բարեգութ սնօրէնութեանը՝ դրախտային կեանքին:

-Սիրելի՛ ընկերներ, մենք այստեղ հաւաքուածներս գիւղում ծնուած, քիչ թէ շատ ուսում առած եւ քաղաք տեղափոխուած երիտասարդներ ենք, մենք ժառանգորդն ենք շահաբաստան բռնագողթի սերունդների: Մեր պապերի այս երկիրը բերուած օրից մինչեւ մեր ժամանակները հայրենիքի կարօտով ենք ապրել եւ յոյսով սպասել, որ օրից մի օր հայրենիքը պետութիւն ունենայ եւ կարող լինի իրենց վերադարձի, իրենց տէրութիւն անի: Ինչպէս տեսնում էք՝ հայրենիք ունենալ, քիչ թէ շատ սկսուել է ներգաղթը, խորհրդային միութեան ընտանիքում գտնուող Հայաստանի պետութեանը թոյլատրուել է՝ իր Սփիւռքահայ հայրենակիցներին, ըստ ցանկութեան դիմում ներկայացնեն, հայրենադարձելու համար, էստեղ ես խօսքը տալիս եմ ձեզ, ամէն մէկը ինչ մտածումներ, որ ունէք էս ուղղութեամբ ասէք:

Առաջին խօսք առնողը Արմէնն էր:

-Կասկած չկայ, որ մենք բոլորս սիրում ենք մեր հայրենիքը, հայրութիւնը եւ ազգութիւնը, դրա համար էլ հազար ու մի տեսակ ներդրումներով մեր պապերը իրենց հաւատքը պահել եւ կտակել են մեզ, ապրել են այն յոյսով, որ մի օր վերադառնան երկիր, հիմա հերթը մեզ է հասել, որ այդ հայրենակարօտ կտակը իրականացնենք, դնանք հայրենիք եւ մեր գլխի ու բազուկի ուժը ծառայեցնենք ի ինդիր նրա զարգացման:

Արմէնն իր խօսքը կապեց կարճ

ու կտրուկ, նա իր ընկերների մէջ ճանաչուած էր որպէս հայրենասէր եւ պատրաստ էր ամէն ինչով ծառայել իր ժողովրդին: Նրան յաջորդեց Արսէնը:

-Մենք միայն մեզ համար պէտք չէ մտածենք, հակառակ չեմ, որ մենք եւս պէտք է վերադառնանք հայրենիք, նկատելով որ հայրենիքից դուրս օտար տեղերում ապագայ չկայ, ապահովութիւն չկայ: Ընդհանրումներ ու կուրսեր շարունակ լինում են աշխարհի տարբեր կողմերում, եւ ուր հայ չկա՞ց, այսպիսով մեր հայրեն են տուժում իրենց վաստակած ինչքը արժան ձեռքից տալով, նրանք գաղթում են մի այլ երկիր իբր թէ ապահովութիւն գտնելու համար, թիւր հակացողութիւն: Աւելի լաւ է գնալ երկիր, այսպիսով միտքդ հանգիստ է, քո հողի վրայ ես ամուր ու հաստատուն եւ ոչ մի ուժ չի կարող քեզ հայրենիքից հեռացնել, քո վաստակն էլ մնում է քո հողի վրայ փոխանցուելով քո ժառանգներին:

-Մենք բոլորս այս կարեւոր ժամանակահատուածում անելիքներ ունենք, նպատակա կազմակերպչական աշխատանքներ տանելն է: Մտնենք ժողովրդի մէջ, նրանց քարոզենք, նրանց քաջալերենք եւ օգտակար լինենք:

Արսէնն իր մտքերը յայտնեց լուրջ եւ մտածուած, որից յետոյ Հայկը սկսեց իր ասելիքը:

-Այո՛, ընկերներ՛, ժողովրդին պէտք է համոզել, որ հայրենիքը ամենաապահով տեղն է, ուր մարդ հայ կը մնայ եւ հայ կը թաղուի, ապագայի ապահովութիւն, մտքի հանգստութիւն եւ հոգու խաղաղութիւն կ'ունենայ: Ինչպէս խօսուում է ներկայիս Հայրենի ղեկավարութիւնը իւրաքանչիւր ընտանիքի համար ապահովում է գործ, բնակարան եւ երեխաների համար դպրոց, ժողովուրդն էլ դա է ուզում: Ասում են Հայաստանը գաւտ չէ, Հայաստանին ուռններն են իշխում, Հայաստանում բռնատիրութիւն է, ոչ կրօն են ճանաչում եւ ոչ ազգութիւն, իրենց կարծիքով ենթադրենք, որ այդպէս է, արդեօ՞ք հայրենիքից պէտք է հրաժարուել, իշխանութիւնները չաւերժական չեն, գալիս ու գնում են, ժողովուրդն ու հայրենիքն են յաւերժական: Հայրենիքից դուրս հայրենիքին վատաբանելը ճիշտ չէ, ներկայումս այսպիսի հարցեր բարձրացնելու ժամանակը չէ: Այսպիսի խօսքեր տարածողները ուզում են ժողովրդի մէջ հակակրօնք առաջացնել եւ նրան վատատես դարձնել հայրենիքի նկատմամբ, թշնամին չի ուզում հայրութիւնը քաշուի Հայաստան, Հայաստանի բնակչութիւնը շատանայ: Այս ներգաղթներով աշխարհի ամբողջ հայրութիւնը չէ որ կը հայրենադարձուեն, ուստի սփիւռքահայի մօտ միշտ հայրենիքի գաղափարը պէտք է սրբութեան բարձրութեան վրայ պահել, որպէս ազգապահպանման եւ հայապահպանման կարեւոր ազգակ:

Այնուհետեւ հերթը հասաւ Արամայիսին:

-Մենք բոլորս գիտենք Հայաստանը անկախ պետութիւն չէ եւ գտնուում է Մովսէսական ընտանիքի շարքում որպէս Մոսկուային ենթակայ ռեսպուբլիկա, հիմա ասենք անուանական եւ ոչ թէ պաշտօնական, սակայն այդ մեր երկիրն է եւ այնտեղ ապրում են հայեր իրենց պետական դրուածքով: Հայկական կեանքն է եռուած այնտեղ իր տնտեսութեամբ, հասարակական կեանքով, համալսարաններով եւ կրթական համակարգով: Մեր մշակոյթն է պահպանուում, գիր ու գրականութիւնն է զարգանում՝ իր սկզբնական, պատմաբաններով, գրողներով,

բանաստեղծներով, մշակոյթի գործիչներով եւ հազար ու մի տեսակ կազմակերպութիւններով: Իւրաքանչիւր հայի հպարտանքի արժանի Մեսրոպ Մաշտոցի անուամբ Մատենադարանն ունենք, ուր աշխարհի չորս ծագերից այնտեղ են հաւաքուում մեր ձեռագիր թանկարժէք մատենաները եւ այնտեղ են աշխատում տասնեակ գիտաշխատողներ: Ս. էջմիածինը՝ մեր հաւատքի կենտրոնը, որին է ուղղուած իւրաքանչիւր հայի հայեացքը, պահպանուում եւ պաշտպանուում է ամենին սիրելի վազգէն Ամենայն Հայոց կաթողիկոսի հովապետութեամբ: Հայաստանը լաւ թէ վատ մեր երկիրն է, ոչ ոք իր լաւը չի տայ մեզ, խաչը ինքը՝ տէրն է գորացնում, մենք ենք որ պէտք է նուիրուածութեամբ պաշտպան կանգնենք եւ զարգացնենք մեր երկիրը, ով է տեսել ապագան, տեսար մէկ օր մենք էլ անկախացանք, ոչ մի տան ճրագ ընդմիշտ հանգած չի մնում:

Արամայիսն իր խօսքն աւարտեց ասելով:

-Հայրենասիրութիւնը լոկ խօսք չպիտի լինի, այլ՝ սէր, կոչում եւ ձգտում, ինչպէս արուեստի, գիտութեան պարագային եւ հոգեւորական սքեմը ընդունողի համար: Հայիենասիրութիւնը անձնանուիրութեան սիրոյ նշան է, հայրենասիրութիւնն աշխատանք է պահանջում, քարը քարի վրայ դնել է սիրում, ճառերով ու խօսքերով հայրենիք չի կառուցուի:

Տղաները ոգեւորուած Արամայիսի խօսքերից ծափահարեցին նրան գնահատելով:

-Ապրես դո՛ւ Արամայիս, ապրես դո՛ւ մեր սիրելի ընկեր:

Անդրանիկը քաջալերուած տղաների խօսքերից աւելացրեց:

-Այո՛, հայրենիքը բոլորինս է, մենք ամէն մէկս պէտք է մեր մասն ու բաժինը բերենք նրա զարգացման եւ հօրացման գործընթացին: Այո՛, հայրենիքի նկատմամբ կարօտն ու սէրը պէտք է վառ պահել սերունդների սրտում ի մասնաւորի սփիւռքում, որը շատ կարեւոր ազգակ է հային հայ պահելու տեսակէտից: Այո՛, մենք եկել ենք իրար շուրջ, որպէսզի մեր կարողութիւնները կրկնապատկուի, առաւել եւս լծուենք մեր առաքելութեան, միասնակապութեամբ է, որ գործը յաջողութիւն կ'ունենայ: Ես ուրախ եմ ձեզանով, որ հոգով ամուր, զգացումով անկեղծ եւ բանականութեամբ առողջ նուիրուած էք հայրենադարձութեան գործին: Ես ձեր արտայայտութիւնների մէջ մոլեռանդութեան ախտ չնկատեցի, ամէն ինչ չափուած ու կշռուած: Այո՛, պէտք է տրամաբանութիւն լինի մեր ասածի ու կատարածի մէջ, ոչ թէ առաջնորդուենք զգացումներով եւ ուրիշների թելադրանքներով:

-Տղերք ջան, բաւական երկար խօսեցինք այդ նիւթի շուրջ, մըտքերի փոխանակութիւն արեցինք եւ տեսակէտներ յայտնեցինք, որոնք մեր ապագայ աշխատանքների համար նկատի կ'առնենք, սակայն բացի դա մի այլ հարց եւս կայ, որը իմ մտահոգութեան պատճառն է դարձել, որի մասին կը խօսենք կէսօրուայ հացը ուտելուց յետոյ, առաջմի գնանք քայլելու, զագաթը բարձրանալու համար երկար ճամբայ ունենք կտրելու:

Դրանով հանդերձ որ տղաները գոհ էին իրենց կլոր սեղանի արծարծուած մտքերից եւ եզրակացութիւնից, սակայն Անդրանիկի երկրորդ մտահոգութիւնը իրենց մտքերը եւս զբաղեցրեց ճանապարհը շարունակելիս:

(Շարունակելի 1)

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի ֆուտբոլի առաջնություն 14-րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները

Արարատ - Ուլիս	3-0
Գանձասար - Միկա	0-2
Բանանց - Կիլիկիա	3-0

ԽՈՒՄԵՐՈՒ ԴԱՍԱԼՈՐՈՒՄԸ

	Խաղ	Ցաղթ.	Հաւս.	Պարտ.	Կոլ	Միաւոր
1. Փիւնիկ	13	10	1	2	30-10	31
2. Արարատ	13	9	2	2	25-7	29
3. Բանանց	13	7	3	3	22-14	24
4. Միկա	14	7	3	4	25-15	24
5. Շիրակ	13	5	3	5	13-12	18
6. Գանձասար	14	4	4	6	10-11	16
7. Ուլիս	14	1	2	11	6-32	5
8. Կիլիկիա	14	1	2	11	4-34	5

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՊՐՈՅԵՍԻՈՆԱԼ ԹԵՆԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Երեւանի «Մասթերգ-կլաս» ակումբի մարզահրապարակներում առաջին անգամ Հայաստանում մեկնարկեց պրոֆեսիոնալ թենիսի միջազգային մրցաշար, որին մասնակցում են 19 երկրների՝ Հայաստան, Ռուսաստան, Ֆրանսիա, Նոր Զելանդիա, Գերմանիա, Չեխիա, Ավստրալիա, Բուլղարիա, Արգենտինա, Բելառուս, Իսրայել, Սլովակիա, Հարավսլավիայի նախկին հանրապետությունները Մակեդոնիա, Ուզբեկստան, Լատվիա, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան, Իսրայել 32 մարզիկներ, որոնցից 5-ը՝ Հայաստանից:

Մրցաշարի հիմնական ցանցի 24 մասնակիցները նախապէս հաստատուած էին իրենց վարկանիշի համաձայն, Յուլիսի 14-ին կայացած ընտրական խաղերի ընթացքում որոշուեցին եւս 4-ը եւ Հայաստանի թենիսի ֆեդերացիան, որպէս մրցաշարի կազմակերպիչ, իրաւունք ունէր 4 մասնակցի ներկայացնել այսպէս կոչուած «ուսույր քարտով», առանց ընտրական մրցումների:

Մրցաշարը կազմակերպուած է թենիսի միջազգային ֆեդերացիայի՝ Այ-Թի-Էֆի հովանու ներքոյ, թենիսի միջազգային ֆեդերացիայի ներկայացուցիչն է Վլադիմիր Էրզը, մրցաշարի տնօրէնն է Վրաստանի թենիսի ֆեդերացիայի նախագահ Լէյլա Մեսխին: Այն ունի 5 միլիոն դրամ մրցանակային ֆոնդ, որը իր միջոցներից յատկացրել է ՀՀ թենիսի ֆեդերացիայի նախագահ Յարութիւն Փամբուկեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՍԹԵԹՊՈՒԼԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՀԱՒԱՔԱԿԱՆՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ԵՐՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԻ ՄՐՑԱՇԱՐԵՐԻՆ

11-ամեայ ընդմիջումից չետոյ Հայաստանի պասթեթպոլիստները դարձեալ ելուցիներ կ'ունենան Եւրոպայի առաջնութիւնում:

Հայաստանի 16 տարեկան տղաների թիմը Մակեդոնիայի Սկոպիէ քաղաքում (Յուլիսի 20-29), նոյն տարիքի աղջիկների հաւաքականը՝ Իտալիայի Կետի քաղաքում, եւ մինչեւ 18 տարեկան տղաների թիմը՝ Բուլղարիայի Սոֆիա քաղաքում (օգոստոսի 1-12), կը մասնակցեն Եւրոպայի առաջնութեան երկրորդ խմբի մրցաշարերին:

ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ԵՈՒՐԻ ՎՈՎԿԸ ՆՈՒԲԵԼ Է «ՍԵՒԱՆ» ՇԱԽՄԱՏԻ ԱԻՆԴԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՅԱՂԹՈՂԻ ԿՈՉՈՒՄԸ

Աւարտուեց շախմատի Սեւանի միջազգային մրցաշարը, որտեղ հայ շախմատիստները ոչնչով աչքի չընկան:

Վերջին 9-րդ տուրից առաջ մրցաշարում յաղթելու լաւ հնարաւորութիւն ունէր Արման Փաշիկեանը, որը 5 միաւորով գլխաւորում էր մրցաշարային աղիւսակը: Սակայն Փաշիկեանը սեւերով պարտուեց հնդիկ Գոպալին եւ գրադեցրեց ընդամէնը 5-րդ հորիզոնականը: Մրցաշարի յաղթող դարձավ Եուրի Վովկը: Ուկրաինացի միջազգային վարպետը սպիտակներով առաւելութեան հասաւ Հրանտ Մելքումեանի նկատմամբ: Վովկը 5.5 միաւորով գրադեցրեց 1-ին հորիզոնականը: Նոյնքան միաւոր էին վաստակել նաեւ Գոպալը եւ Լի Չաոն, որոնք սակայն լրացուցիչ ցուցանիշներով գրադեցրեցին 2-3-րդ տեղերը:

Մրցաշարում ամենաբարձր վարկանիշ ունեցող Տիգրան Պետրոսեանը գրաւեց ընդամէնը 7-րդ հորիզոնականը: Մրցաշարային աղիւսակը 2.5 միաւորով եզրափակեց Տիգրան Քոթանջեանը:

ՏԻԳՐԱՆ Լ.ՊԵՏՐՈՍԵԱՆԸ՝ ICC CHESS 960-Ի ՅԱՂԹՈՂ

Հայաստանի գրոսմայստեր Տիգրան Լ.Պետրոսեանը, եզրափակիչում 4:2 հաշուով յաղթելով գրոսմայստեր Գաթա Կամսկուն ԱՄՆ-ից, դարձաւ ICC Chess960 մրցաշարի յաղթողը:

Մինչ այդ Տ.Պետրոսեանը մէկ քառորդ եզրափակիչում 3:0 հաշուով յաղթեց գրոսմայստեր Իվան Սոկոլովին Հոլանդիայից, իսկ կիսաեզրափակիչում, 3:0 հաշուով՝ բուլղարացի գրոսմայստեր Կիրիլ Գեորգիեւին:

Մ. Չանոյեանը Եւրոպայի ատլետիկայի առաջնութիւնում գրադեցրել է 8-րդ տեղը:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
 ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
 ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ
 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ԲՈՆՑՔԱՍԱՐՏ

ԵՐՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ ԵՒ ԱԶԱՏ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ԲՐՈՆՁԷ ՄԵՂԱՆՆԵՐ ՆՈՒԲԵՑԻՆ

Հայաստանի բռնցքամարտիկներ, 51կգ քաշային Արթուր Գրիգորեանը եւ 57կգ քաշային Ազատ Յովհաննիսեանը պարտութիւն կրեցին կիսաեզրափակիչ մրցամարտերում Սերբիայի Սոմբոր քաղաքում ընթացող բռնցքամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութիւնում եւ նուաճեցին առաջնութեան բրոնզէ մեդալներ:

Մրցաշարին մասնակցեցին Հայաստանի եւս 4 մարզիկներ՝ 54կգ քաշային Սամուէլ Բարսեղեանը, 60կգ՝ Արա Փուլուզեանը, 64կգ՝ Միքայէլ Օհանեանը եւ 91կգ՝ Յուրակ Անանիկեանը: Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի գլխաւոր մարզիչն է Դերենիկ Ոսկանեանը, մարզիչը՝ Կարէն Աղամալեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՔ ԲՈՆՑՔԱՍԱՐՏԻԿՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԳՐԱԴԵՑԻՆ ԱՂԼԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Յուլիսի 13-15-ին Աղլերում անցկացուեց բռնցքամարտի միջազգային երիտասարդական մրցաշար: Հայաստանցի մարզիկներ Սպարտակ Մաթեւոսեանը (57 կգ), Արծրուն Առաքելեանը (64 կգ, երկուսն էլ Փարաքար) եւ Արտաշ Կարապետեանը (81 կգ, Արարատ) յաղթեցին իրենց բոլոր մրցակիցներին եւ գրաւեցին առաջին տեղը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ 5 ԸՄԲԻՇՆԵՐ ԴԱՐՁԱՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԱՆՅՎԱՅՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Յուլիսի 15-ին Թբիլիսիում աւարտուեց ըմբշամարտի միջազգային մրցաշարը: Յունահունդական ոճում երկրորդ տեղը գրաւեց Արման Գեղամեանը (96 կգ, Ախուրեան): Ազատ ոճի ըմբշամարտում Վահան Սիմոնեանը (55 կգ, Երեւան) նուաճեց յաղթողի կոչումը, երկրորդ մրցանակակիր դարձաւ Յարութիւն Ենոքեանը (84 կգ, Երեւան), իսկ երրորդ մրցանակակիրները՝ Միհրան Զաբուրեանը (55 կգ, Երեւան) եւ Ժիրայր Յովհաննիսեանը (66 կգ Վանաձոր):

Հ.Մ.Մ. ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ուրախութեամբ կու գանք ձեզի տեղեկացնելու թէ ամէն Շաբաթ առաւօտեան ժամը 10:30էն մինչեւ 1:00 տեղի պիտի ունենայ սկաուտական դասըթացքներ: Անոնք որ կը փափաքին մաս կազմել սկաուտական կամ պասքեթպոլի խումբերուն կրնան դիմել Գաբրիէլ Մխիթարեանին՝ (626) 376-2658 եւ կամ Հ.Մ.Մ.ի Կեդրոնը՝ (626) 398-0506, 1060 N. Allen Ave. Pasadena
 Մանրամասնութիւններուն համար կրնաք հետեւիլ »Մասիս« շաբաթաթերթին:

ԱՊԱՔԻՆՈՒՄ

Ընկ. ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՅԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒՄԸ է ՈՍՔԻ յաջող գործողութեան մը Լուիզիանայի հիւանդանոցին մէջ: Այժմ հանգստեան շրջան մը կը բոլորէ իր բնակարանին մէջ:
 Այս առթիւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը եւ տնօրէնութիւնը արագ ապաքինում կը մաղթեն յարգելի ընկերոջ:

Ընկ. ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ ՈՍՔԻ յաջող գործողութեան ԵՆԹԱՐԿՈՒՄԸ ԵՆ ԱՌԹԻՆ Լուիզիանայի Ս.Դ.Հ.Կ. Ժիրայր Մուրատ մասնաճիւղի վարչութիւնը շուտափոյթ ապաքինում կը մաղթէ իր հաւատաւոր կուսակցական ընկերոջ:


Ընկ. ՊՕՂՈՍ ՄՈՒԹԱՅԵԱՆԻ գաւակներն ու թոռները (Մուխաֆեան եւ Elwood) արագ ապաքինում կը մաղթեն իրենց հօր եւ մեծ հօր ու կը ցանկան կատարեալ առողջուիլն:

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան
 ժամը 10:00-ից 12:00
 Կլէմտէյի 26-րդ կայանից

HARUT DER-TAVITIAN
 License #0828270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
 Glendale, CA 91201

Tel.: 818/502-3233
 Fax: 818/502-3244
 Pgr.: 818/608-9898
 info@excelhye.com
 www.excelhye.com


HYE INSURANCE SERVICES

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈԳՇ. Տ. ԴԱՆԻԷԼ ՎՐԴ. ՖԸՆՏԸԳԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակում է 7-էն

տուն ներկայութիւն դարձնելու համար նաեւ Արեւմտեան Թեմէն ներս:

Յաջորդ օր, 10 Յուլիս 2007, առաւօտեան ժամը 10:00-ին, հանդիպումը շարունակուեցաւ: Նախ, առաջին հերթին, յատուկ ծրագրով մը Հոգեւոր Տեսուչը հարցազրոյց մը ունեցաւ Ս. Ներսէս Ընծայարանի առաքելութեան մասին, ապա հարցազրոյցի աւարտին, ելոյթ ունեցան Արեւմտեան Թեմի քահանայութեան թեկնածուները՝ Բայրն Սրկ. Թէլալեանը, Մաթիոս Սրկ. Աշը եւ Մկրտիչ Սրկ. Քաչիկեանը, որոնք իրենց քահանայութեան պատրաստութեան համար պիտի յաճախեն Ս. Ներսէս Ընծայարան:

Կէսօրուան ճաշի դադարէն ետք, հանդիպումը շարունակուեցաւ առաւել եւս քննարկելով այն շոշափելի երեաները, թէ ինչպէս կարելի է գործնականօրէն կիրարկել այն ծրագիրները, որոնք տեղի կ'ունենան Ս. Ներսէս Ընծայարանին ներս, եւ զայն մնայուն ներկայութիւն դարձնելու Արեւմտեան Թեմէն ներս, որուն համար ալ աշխատանքային ծրագիր մը առաջարկուած էր Արթ. Տ. Սարգիս Քհնյ Բեթոյեանի կողմէ:

Առաջարկուած աշխատանքային ծրագիրներն էին.

Առաջին հերթին նշանակուի մէկը (Coordinator), որ մնայուն կապը ըլլայ Արեւմտեան Թեմին եւ Ս. Ներսէս Ընծայարանին, ծրագիրները հետապնդելու եւ կարգաւորելու իմաստով:

Յատուկ պիւտճէ մը տրամադրուի, բոլոր անոնց, որոնք պիտի յաճախեն Ս. Ներսէս Ընծայարան պատրաստուելու իբրեւ եկեղեցական: Կը նախատեսուի \$ 10,000 տրար:

Առաջին իսկ առիթով, պաշտօնական այս աշխատանքները սկսին փետրուար 2008-ին, Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից Տօնին, ուր Ս. Ներսէս Ընծայարանը ներկայացուի քահանաներու համագումարի ընթացքին, որ ամէն տարի Ղեւոնդեանց տօնին տեղի կ'ունենայ:

Ս. Ներսէս Ընծայարանը նաեւ ներկայացուի Արեւմտեան Թեմէն

ներս գործող ամենօրեայ վարաժարաններու երկրորդական դասարանի աշակերտութեան, մօտէն ծանօթանալու այնտեղ կատարուած աշխատանքներուն:

Ս. Ներսէս Ընծայարանի ներկայութիւնը Արեւմտեան Թեմէն ներս գործող համալսարանի հայ ուսանողներուն կեանքին մէջ:

Երեք օրերու վրայ տարածուած ծուխերու այցելութիւն, Ս. Ներսէս Ընծայարանը մօտէն ծանօթացնելու իմաստով:

Արեւմտեան Թեմի կայքէջին (Web page) վրայ յատուկ տեղ տրամադրուի Ս. Ներսէս Ընծայարանի համար:

Յատուկ խտասայլիկներ (DVD) պատրաստուի Ս. Ներսէս Ընծայարանի մասին:

Յատուկ Ս. Ներսէս Ընծայարանի օր նշանակուի ծուխերու մէջ, ուր ներկայացուի անոր առաքելութիւնն ու կարեւորութիւնը մեր հաւատացեալներուն:

Ուխտադնացութիւն դէպի Ս. Ներսէս Ընծայարան, որպէսզի տեղեակ ըլլան այնտեղ կատարուած աշխատանքներուն:

Յատուկ ծրագրով մը Արեւմտեան Թեմին մէջ ծառայող եկեղեցականներուն առիթ տրուի երկշաբաթեայ դրութեամբ այցելելու եւ մօտէն ծանօթանալու Ս. Ներսէս Ընծայարանի առաքելութեան, ու անոր ներքին կեանքին:

Կազմակերպուին խտացուած դասընթացքներ: Առաջին հերթին Ս. Ներսէս Ընծայարանի մէջ դասաւանդուելիք նիւթերը Արեւմտեան Թեմէն ներս: Երկրորդ, Ս. Ներսէս Ընծայարանի շրջանաւարտներուն համար խտացուած հայերէն լեզուի յատուկ դասընթացքներ Արեւմտեան Թեմէն ներս:

Ի վերջոյ, Ս. Ներսէս Ընծայարանը ներկայութիւն դարձնելու նաեւ ամառնային ճամբարի ընթացքին:

Այս բոլոր առաջարկ ծրագիրները կը նախատեսուին արդէն յառաջիկայ տարեշրջանին իրենց գործնականացման:

Հանդիպումը իր աւարտին հասաւ երեկոյեան ժամերգութեամբ:

17-19ՐԴ ԴԱՐԵՐՈՒ ՀԱՅ ՔԱՂՔԵՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Շարունակում է 13-էն

հանոցի կարգ մը առարկաներ»:

1667ին Նոր Զողայէն երկու խոճաներ արտօնագիր ստացան Ալեքսանդ Միխայիլովիչէն՝ առանց տուրքի մետքաս ներածելու եւ ծախելու Ռուսիոյ մէջ: Մինչեւ 17րդ դարուն վերջը միայն հայ վաճառականներ արտօնութիւն ունէին առեւտուր ընելու Աստրախանէն հիւսիս:

Երբ խոճաներ Մոսկուա երթային, անոնք յաճախ նուէրներ կը տանէին ցարին: Առիթով մը խոճա Նազարը Ալեքսէյ ցարին աղամանդակուռ գահ մը նուիրեց, որ մինչեւ այսօր կը պահուի Կրեմլինի Զինուորական թանգարանին մէջ:

Հայ խոճաներ կը մրցէին անգլիական եւ եւրոպական այլ ընկերութիւններու հետ: Հայերուն առեւտուրը ընտանեկան էր, ընկերութիւն չէր: Խոճա Շահամիր Շահամիրեանը, օրինակի համար, Նոր Զողայէն, հաստատուած էր Մատրաս, Հնդկաստան: Ան առեւտրական կեղրոններ ունէր Հնդկաստանի, Պարսկաստանի, Միջագետքի եւ Եւրոպայի շատ մը քաղաքներու մէջ:

Շահ Աբասը այնքան գոհ էր հայոց առեւտրական յաջողութիւններէն, որ երբեմն կ'այցելէր հայոց եկեղեցին կամ խոճաներուն տուները, Ս. Ծնունդին կամ Աստուածայայտութեան տօներուն:

Աբասին յաջորդը՝ Շահ Սաֆի, կը հիւրասիրուէր հայ հարուստ խոճաններուն տուները: Առիթով մը այնքան կերաւ ու խմեց խոճա Սուլթեմնին տունը, որ երբ պալատ վերդարձաւ, անհանգստացաւ՝ տեղի տալով տարածայնութիւններու, թէ Սուլթեմն թունաւորած է շահը: Սուլթեմնը, վախնալով հետեւանքներէն, անձնասպան եղաւ՝ վիշտ պատճառելով արքային, որ յաջորդ օր կը վերադառնար իր առողջութիւնը: Շահ Աբաս Բ. երբեմն Նոր Զողայ կու գար իբր թէ Ս. Փրկիչ Մայր տաճարը այցելելու, բայց իրականին մէջ հայ կիները աչքէ անցընելու համար: Այդ առիթներով բոլոր հայ մարդիկը պէտք էր քաղաքէն դուրս ելած ըլլային: Առիթով մը շահը իրեն հետ տարաւ խոճա Սաֆրազին գեղեցիկ կիներ: Երկու շաբաթ իր հարէմին մէջ պահելէ ետք կիներ վերադարձուց տիրոջ՝ մարգարիտէ մանեակ մը անոր հետ:

Կ'ըսուի, թէ հայ խոճաներ 24 եկեղեցիներ կառուցեցին Նոր Զողայի մէջ, որոնցմէ 12ը այսօր դեռ կանգուն կը մնան: Անոնցմէ մէկը Ֆինանսաւորուած էր խոճա Խաչիկին կողմէ, որ 1604ին Հին Զողայի իր ապարանքին մէջ հիւրասիրած էր Շահ Աբաս Ա.:

Նոր Զողայի բարգաւաճումը հագիւ դար մը տեւեց: 17րդ դարուն վերջերը Պարսկաստանի շահերուն եւ այաթոլլաներուն քաղաքականութիւնը քրիստոնեաներուն հանդէպ բոլորովին փոխուեցաւ: Հալածանքներու եւ ծանր տուրքերու պատճառով մեծ թիւով հայեր սկսան գաղթել դէպի Պոմպէյ, Մատրաս, Կալկաթա (Հնդկաստան), ուր սկսան բարգաւաճիլ, ինչպէս որ ըրած էին Հին եւ Նոր Զողաներուն մէջ: 1720ական թուականներուն Պետրոս Ոսկանեան, Նոր Զողայի յայտնի ընտանիքներէն, երեւելի վաճառակ մըն էր Մատրաստի մէջ եւ կապ ունէր «Իսթ Ինտիա Քոմփանի»ին հետ: Ուրիշ հայ ընտանիքներ գաղթեցին Մոսկուա, Ս. Փեթրսպոլսի եւ ուրիշ քաղաքներ, ուր անոնք ուսուցանուեցին մետքաս ներկել:

(Շարունակելի 1)

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԷՁ 15-ԷՆ

Շարունակում է 15-էն

շեղելու:

Վստահ եմ Փրօֆէսօւէրին մօտէն ծանօթ, իր բարեկամներու լայն շրջանակէն ոեւէ մէկը, ըստ մը պիտի չվարանէր իր ատորագրութիւնը դնելու այս գրութեան ներքեւ:

* * *

Շատերը ըսեր են ու ես ալ կ'ըսեմ, թէ աշխարհն է մի մեծ թատերաբեմ.

Ամէն արարած բեմ կը բարձրանայ եւ իւրապատուկ դերը կը խաղայ:

Մին իմաստունի, միւսը սոփիստի, կ'ըլլան առարկայ շոյալ գովեստի.

Անձնիւր դերասան կը քաշուի խուցը, կը հագնի կրկին իր հին

հագուստը:

Այս անցողական երկրի վրայ, դերասաններ ենք մեր կեանքը վկայ.

Մէկը վարքով, մաքուր հաւատքով, միւսը ձեւապաշտ՝ հիւսանդ իր հոգով,

Մին ազնուական, բարեգութ, գթած, ուրիշ մը գձուձ՝ անգութ արարած,

Ոմանք դիմակով, ոմանք անդիմակ, չես գիտեր, ով է հրէշ եւ ով հրեշտակ:

Բայց մեր մահով, երբ կեանքը կ'աւարտի, կ'երեւայ գործը ամէն անհատի:

Թէ ի՞նչպէս խաղաց իր դերը դժուար, երկրի վրայ քառս ու խաւար:

Կը ցոյլ մահէն ետք յստակ, ինչպէս աւազը գուլալ ջուրի տակ:

ԳՐԱԴՈՒՄ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Օգոստոս 5 «Մասիս» Շաբաթաթերթի ճաշկերոյթ
Սեպտեմբեր 1,2,3 Հ.Ս.Ս. Փաստինա եռօրեայ բանակում
Սեպտեմբեր 23 Հայաստանի Անկախութեան Օրուայ Փառատօն
Նոյեմբեր 4 ՍԳԿԿ-ի 120 Ամեակի Հանդիսութիւն

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to
Massis Weekly

Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Fax: -----

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՇԵՆԱՉԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

